

# ԽՈՐԵՆ ՍԱՖՐԱՆՅԱՆ



ՄԱԿՐԵԱԾ ՔԵՐԸ,  
ԳԵՅՐԵՐ  
ՀԵՅԻՆՏԵՐ ՀԵՄՐԵՊԵՏԱԹՅՈՒՆ ԴԵՐ  
1919-1921 թ.թ.



ՀՀ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՏԻՏՈՒՅՑ


ՈՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏԵԱՆ

*ՀՀ ՍՊԸ ՀԱՅ ՀԵՄԱՆ*  
ՍՈՒԹԱՖԱ ՔԵՍԱԼ.  
ՊԱՅՔԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
(1919-1921 թթ.)

ԵՐԵՎԱՆ



2019



МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РА  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ НАН РА

РУБЕН САФРАСТЯН

МУСТАФА КЕМАЛЬ.  
БОРЬБА ПРОТИВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
(1919-1921 ГГ.)

ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО “ТИР”  
2019

MINISTRY OF DIASPORA OF RA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAN RA

RUBEN SAFRASTYAN

MUSTAFA KEMAL:  
THE STRUGGLE AGAINST REPUBLIC OF ARMENIA  
(1919-1921)

YEREVAN  
TIR PUBLISHING HOUSE  
2019

ՀՏԴ94(479.25)

ԳՄԴ3.3(5Հ)

Ս 305

Տպագրվել է ՀՀ Սփյուռքի նախարարության դրամաշնորհով  
Հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության  
ինստիտուտի գիտական խորհուրդը

Պատասխանատու խմբագիր՝ պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյան

Սաֆրաստյան Ռ. Ա.

Ս 305 Մուաթաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության  
դեմ (1919-1921 թթ.)/ Ռ. Ա. Սաֆրաստյան; ՀՀ ԳԱԱ Արևելագի-  
տության ինստիտուտ.- Եր.: «Տիր» հրատ., 2019.- 140 էջ + 4 էջ  
Ներդիր:

Մենագրությունը նվիրված է Թուրքիայի Հանրապետության հիմ-  
նադիր Մուաթաֆա Քեմալ Աթաթօւրքի գործունեությանը 1919-1921 թվա-  
կաններին, որի նպատակն էր մահացու հարված հասցնել Հայաստանի  
Հանրապետությանը: Հեղինակն անդրադառնում է նաև Աթաթօւրքի  
գաղափարական հայացքների և քաղաքական գործունեության այն կող-  
մերին, որոնք հնարավորություն են տալիս առավել հիմնավոր պատկե-  
րացում կազմել նրա քաղաքականության իրական շարժադիմների մա-  
սին: Գիրքը գրված է թուրքական սկզբնաղբյուրների մանրակրկիտ  
քննության հիման վրա: Նախատեսված է թուրքագետների, արևելա-  
գետների, պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ94(479.25)

ԳՄԴ3.3(5Հ)

ISBN 978-9939-865-56-0

© Սաֆրաստյան Ռ. Ա., 2019

© ՀՀ Սփյուռքի նախարարություն, 2019

© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2019

© «Տիր» հրատարակչություն, 2019

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ.....	6
<b>ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ .....</b>	<b>12</b>
ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԸ Կ.ՊՈԼՍՈՒՄ .....	12
1. ԶԻՆԱԴԱԴՐ .....	12
2. ԻՇԽԱՆԱՏԵՆՉ ՈՒ ԴԱՎԱԴԻՐ ՓԱՇԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ.....	21
3. ՄԵԿՆՈՒՄ ԱՐԵՎԵԼՔ .....	35
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.....</b>	<b>40</b>
«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ՄԵԶՏԵՂԻՑ ՎԵՐԱՑՎԻ...»	40
1. ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ .....	40
2. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ.....	57
3. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ .....	74
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ .....	85
ՎԵՐՁԱԲԱՆ .....	107
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	110
SUMMARY .....	129
РЕЗЮМЕ .....	134

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Սույն գրքի մտահղացման ակունքները գտնվում են իմ ուսանողական տարիներում, անցյալ դարի 70-ական թթ. կեսերին, երբ ես սովորում էի ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի Թուրքագիտության բաժնում: Թուրքիայի պատմության մեր սիրելի դասախոսը՝ Երջանկահիշատակ պրոֆեսոր Երվանդ Սարգսյանը, որը միաժամանակ գլխավորում էր նաև Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժինը, լինելով Թուրքիայի նոր և նորագոյն շրջանի պատմության խորը գիտակ, քննադատաբար ներկայացնում էր Մուսթաֆա Քեմալ Աթաթօւրքի գլխավորած ազգայնամոլական շարժման պայքարը Թուրքիայի տարածքային ամբողջականության համար, որի հիմնական թիրախն էր Հայաստանի Հանրապետությունը, մեծ ուշադրություն էր հատկացնում Հայաստանի դեմ քեմալականների ագրեսիային:

Սակայն, երբ մենք անդրադառնում էինք այն ժամանակ գոյություն ունեցող դասագրքային բնույթի նյութերին, ապա տեսնում էինք, որ այստեղ Մուսթաֆա Քեմալը հանդես է գալիս որպես առաջարեմ պետական գործիչ, որը հիմնադրեց ուղեկավարեց թուրք ժողովորդի ազգային-ազատագրական պայքարն արևմտյան իմաստիայիստների և նրանց կամակատար Հայաստանի դեմ: Պատերազմը վերջինիս դեմ ներկայացվում էր նաև որպես արդարացի, որը նպատակ ուներ ազատագրելու հայ աշխատավորներին ծանր սոցիալական լծից:

Ակնհայտորեն առաջանում էր Երկիրեղկվածություն այն գիտելիքների, որոնք մենք ստանում էինք՝ ունկնդրելով դասախոսությունները, և այն դասագրերի միջև, որոնք հրատարակված էին Մոսկվայում և ըստ Էության պարտադրված էին մեզ՝ հայաստանցի թուրքագետ ուսանողներիս: Փաստորեն, մենք այն ժամանակներում ապրում էինք Երկու զուգահեռ «թուրքագիտական իրականությունների» պայմաններում՝ հայկական և խորհրդային:

Մոսկվայից պարտադրվող Թուրքիայի Հանրապետության հիմնադիր Աթաթյուրքի գործունեության աղավաղված և իրականությանը չհամապատասխանող մեկնաբանությունը բխում էր քաղաքական դրդապատճառներից: Խորհրդային Միությունը, շահագրգոված լինելով հարևան Թուրքիային տեսնել մի այնպիսի Երկիր, որը գտնվում է իր ազդեցության ոլորտում, այլ ոչ թե դաշնակցում է ԱՄՆ-ին և անդամակցում ՆԱՏՕ-ին, ամեն կերպ փորձում էր սիրաշահել նրա պաշտոնական շրջանակներին: Այդ քաղաքականության մաս էր կազմում նաև թուրքական պաշտոնական պատմագրության կողմից ստեղծված Աթաթյուրքի կուտքին և մի շարք առասպելներին կուրորեն հետևելը:

Արդեն այն ժամանակ պարզ էր, որ անհրաժեշտ է իրականացնել անաշառ, սկզբնադրյուրների վրա հիմնված հետազոտություն՝ նվիրված Մուսթաֆա Քեմալի գործունեությանը և հայացքներին, որոնց թիրախը հայ ժողովուրդն էր:

Այդ գաղափարը փորձում ենք իրականություն դարձնել սույն գրքով՝ հիմնվելով Մուսթաֆա Քեմալի հեղինակած կամ իր ստորագրությունը կրող փաստաթղթերի, այդ թվում նաև

գաղտնի և հոյժ գաղտնի<sup>1</sup>, ինչպես նաև Ներգրավելով նրա Ելոյթները Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նիստերում, այդ թվում նաև գաղտնի<sup>2</sup>, և նրա հրապարակային Ելոյթներն ու հարցազրոյցները<sup>3</sup>: Օգտագործել ենք նաև Մուսաֆա Քեմալի հուշագրությունները, նոթատետրերի գրառումները և այլն<sup>4</sup>:

---

<sup>1</sup> [Atatürk], Atatürk'un Tamim, Telgraf ve Beyannameleri. IV. Ankara: TTK Basımevi, 1991; [Atatürk] Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: I. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995; [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995.

<sup>2</sup> TBMM Gizli Celse Zabitleri. Cilt: 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1337 (1921). Ankara: Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985; TBMM Gizli Celse Zabitleri. Cilt: 2, 17 Mart 1337 (1921) – 25 Şubat 1338 (1921). Ankara: Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985; T.B.M.M. Zabitlarından Doğu ve Güney Doğu Meselesi. Hazırlayan: Nurettin Gülmez. İstanbul: Hamle, 1992; [Atatürk], Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: Kâzım Öztürk. Ankara, 1990; Atatürk Mustafa Kemal, Türkiye Büyük Millet Meclisi Gizli Oturumlarında Sorunlar ve Görüşler (23 Nisan – 29 Ekim 1923). Yayına Hazırlayan: Raşit Metel. İstanbul: Bilge Yayınları, 1990; [Atatürk], Atatürk'ün Resmi Yayınlarla Girmemiş Söylev, Demeç, Yazışma ve Söyleşileri. Sadi Borak. 3. Basım, İstanbul: Kaynak Yayınları, 1998; TBMM tutanaklarında Kars, Ardahan ve Artvin'in kurtuluşu, Gümrü ve Kars antlaşmaları. Editör: Cengiz Çetintaş, 1. Baskı, 2017.

<sup>3</sup> [Atatürk], Atatürk'ün Söylev ve Demeçleri. I: Türkiye Büyük Millet Meclisinde ve C. H. P. Kurultaylarında (1919 – 1938). (Açıklamalı Dizin İle). 5. Baskı. [Ankara], 2006; [Atatürk], Atatürk'ün Söylev ve Demeçleri. II (1906 – 1938). (Açıklamalı Dizin İle). 5. Baskı. [Ankara], Türk İnkılâp Tarihi Enstitüsü Yayınları, 1997; [Atatürk], Atatürk'ün Söylev ve Demeçleri. III: 1918-1937 (Açıklamalı Dizin İle). 5 Baskı. [Ankara], 2006.

<sup>4</sup> [Atatürk], Gazi Mustafa Kemal Atatürk'ten Bize: Söylevleri, Konuşmaları, Söyleşileri, Anıları, Genelgeleri, Yazışmaları (1903 -1938). Cilt I (1903 - 22/4/ 1920). Türkçelestiren: M. Sunullah Arisoy. İstanbul: Hürriyet Vakfı Yayınları, 1987; [Atatürk], Atatürk'ün Anıları. Yayına Hazırlayan: İsmet Görgülü, 2 Basım, İstanbul: Bilgi Yayınevi, 1998.

Մեր կողմից օգտագործված այդ բնույթի սկզբնաղբյուրների թիվն անցնում է քսանից:

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում թորքական բանակի Գլխավոր շտարի կողմից հրատարակվող «Ռազմական պատմության փաստաթղթեր» խորագիրը կրող պարբերականի հատորները: Այդ սահմանափակ տպաքանակով հրատարակված պարբերականից մենք օգտագործել ենք 1950-ական թթ. լուս տեսած մի շարք հատորներ<sup>5</sup>: Կարևոր էր նաև թուրքական բանակի Գլխավոր շտարի կողմից հրատարակված բազմահատորյակի այն հատորը, որը հատուկ նվիրված է Հայաստանի դեմ պատերազմին<sup>6</sup>:

Օգտագործել ենք նաև մի շարք հուշագրություններ, որտեղ ուշագրավ նյութ է պարունակվում Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի, նրա կենսագրության առանձին դրվագների մասին: Այդ բնույթի նյութերն ունեն առանձնահատուկ կարևորություն, քանի որ նրա կյանքի ու գործունեության շատ դրվագներն արտացոլող գրավոր փաստաթղթեր բացակայում են<sup>7</sup>: Հաջողվեց ձեռք բերել նաև Զինադադարի և քեմալական

<sup>5</sup> Harb Tarihi Vesikalari Dergisi. 1953, Yıl: 2, Sayı: 4, Ankara: E.U. Basimevi; Harb Tarihi Vesikalari Dergisi. 1953 Eylül, Yıl: 2, Sayı: 5. Ankara: E.U. Basimevi; Harb Tarihi Vesikalari Dergisi. 1956 Haziran, Yıl: 5, Sayı: 16. Ankara: E.U. Basimevi; Harb Tarihi Vesikalari Dergisi. 1956 Eylül, Yıl: 5, Sayı: 17. Ankara: E.U. Basimevi.

<sup>6</sup> Türk İstiklal Harbi: III Nü Cilt: Doğu Cephesi (1919-1921). Ankara: Gnkur. Basimevi, 1965.

<sup>7</sup> Տես, օրինակ, Cebesoy Ali Fuad, Milli Mücadele Hatıraları. İstanbul: Vatan Neşriyatı, 1953; Cebesoy Ali Fuad, Moskova Hatıraları. İstanbul: Vatan Neşriyatı, 1955; Inönü İsmet, Hatıralar: 1. Kitap. Yayına Hazırlayan: Sabahattin Selek. Ankara, 1985; Karabekir Kâzım, İstiklal Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-

շարժման տարիներին Կ.Պոլսում տեղակայված բրիտանացի հետախոսյա Ձոն Բենեթի հուշերը, որտեղ կան մի շարք ուշագրավ անդրադարձներ՝ կապված Աթաթօւրքի հետ<sup>8</sup>:

Հետազոտական գրականությունը՝ նվիրված Մուսաֆա Քեմալ Աթաթօւրքին, չափազանց հարուստ է և հաշվում է տասնյակ հազարավոր անուններ, որոնց հեղինակներն ինչպես թուրք մասնագետներն են, այնպես էլ արտասահմանցիները: Նրանց մի մասը ներկայացնում է թուրքական պաշտոնական պատմագրությունը կամ էլ գրված է նրա ազդեցության ներքո: Վերջին տարիներին սկսեցին հրատարակվել այնպիսի աշխատանքներ, որոնց հեղինակները փորձում են ազատվել Աթաթօւրքի մասին ստեղծված առասպելներից ու կարծրատիպերից և հանդես են գալիս ավելի անաշար դիրքերից: Ավելորդ է նշել, որ սույն գրքի հեղինակը նախապատվությունը տվել է այդպիսի աշխատություններին<sup>9</sup>:

---

1960; Karabekir Kâzım, İstiklâl Harbimizde Enver Paşa ve İttihat Terakki erkânı. İstanbul: Menteş, 1967; Karabekir Kâzım, İstiklal Harbimizin esasları. İstanbul: Timas, 1992; Özalp Kâzım, Millî Mücadele, 1919 - 1922. I. Ankara: TTK Basimevi, 1971.

<sup>8</sup> [Benneth] Witness: The Autobiography of John G. Benneth, Tucson: Omen Press, 1974.

<sup>9</sup> Տես, օրինակ, Akal Emel, Mustafa Kemal, İttihat Terakki ve Bolşevizm Milli Mücadelenin Başlangıcında. 2. Basım (genişletilmiş ve gözden geçirilmiş). İstanbul, 2006; Şimşek Erdal, Bahar İlhan, Türkiye'de İstihbaratçılık ve MİT. İstanbul: Kum Saati, 2004; Criss Nur Bilge. İstanbul under Allied Occupation 1918-1923. Leiden: Brill, 1999; Mango Andrew, Atatürk: The Biography of the Founder of Modern Turkey. New York: The Overlook Press, 2002; Zürcher Erik Jan, The Unionist Factor: The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905 – 1926. Leiden: E. J. Brill, 1984 ևայլն:

Հեղինակը հույս ունի, որ սույն գիրքը կնպաստի Շուրբաթիայի Հանրապետության հիմնադիր Մուաթաֆա Քեմալ Աթաթօւրքի հայացքների ու գործունեության այն հատվածների պարզաբանումներին, որոնք առնչվում են մեր ժողովողի պատմության շրջադարձային փուլերից մեկին և կնպաստի ընդհանրապես նրա կերպարի ավելի խորը և բազմակողմանի ըմբռնմանը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ՄՈՒՍԹԱՖԱ ՔԵՄԱԼԸ Կ.ՊՈԼՏՈՒՄ

#### 1. ԶԻՆԱԴԱԴՐ

1918 թ. հոկտեմբերի 30-ին միրիվա (գեներալ-մայոր) Մուսթաֆա Քեմալ փաշան նշանակվեց օսմանյան բանակի Յըլիջըրըմ (Կայծակ) բանակային խմբի հրամանատար: Այդ բանակային խմբի պատասխանատվության շրջանն ընդգրկում էր Պաղեստինը, Սիրիան և Իրաքը: Մուսթաֆա Քեմալը նախքան նոր նշանակումը զբաղեցնում էր նույն բանակային խմբի կազմի մեջ մտնող 7-րդ բանակի հրամանատարի պաշտոնը: Այդ պաշտոնն ամենաբարձրն էր արհեստավարժ սպայի նրա կենսագրությունում:

Քեմալը փոխարինեց գերմանացի հայտնի զորավար ու ռազմական գործիչ, գեներալ-ֆելդմարշալ Լիման ֆոն Զանդերսին: Արդեն հաջորդ օրը նա ժամանեց Արանա, որտեղ տեղակայված էր Յըլիջըրըմ բանակային խմբի հրամանատարության կենտրոնակայանը, և անցավ իր պարտականությունների կատարմանը:

Նոր նշանակումով Քեմալը «պարտական» էր այդ նույն օրը՝ 1918 թ. հոկտեմբերի 30-ին, Լեմնոս կղզու Մուլլոս նավահանգստի մատուցներում խարիսխ գցած անգլիական «Ազամեմնոն» ռազմանավի վրա Օսմանյան կայսրության և Անտանտի երկրների միջև կնքված զինադադարին, քանի որ այն նախատեսում էր, որ օսմանյան բանակում ծառայող գերմանացի սպաներն ու գեներալները պետք է փոխարինվեին:

թուրքերով: Միաժամանակ, զինադադարը նշանակում էր, որ Քեմալի ձգտումը՝ հասնել բարձրագույն զինվորական պաշտոնների ու կոչումների, դառնում է անիմաստ, և նա պետք է որոներ նոր ոլորտներ իր փառամղությունը բավարարելու համար: Դժվար թե նա նոյնիսկ ամենահեռուն գնացող իր երազանքներում կարող էր երևակայել, թե զինադադարով նրա առջև բացվում է մի նոր ճանապարհ, որը կապահովի նրա տեղը պատմության մեջ՝ որպես Օսմանյան կայսրության փլատակների վրա առաջացած Թուրքիայի հանրապետության հիմնադիր և թուրք ազգի հայր՝ Աթաթօւրը<sup>10</sup>:

Նախքան Քեմալի կյանքի այդ նոր ուժին և նրա իշխանատենչ անհատականության այլևայլ դրսևորումները բնութագրելը, անհրաժեշտ է թեկուզ համառոտակի անդրադառնալ զինադադարի հիմնական դրույթներին, քանի որ դրանք որոշիչ նշանակություն ունեցան իրադարձությունների հետագա ընթացքի վրա: Բրիտանական ռազմանավի վրա ստորագրված փաստաթույշն ազդարարեց Օսմանյան կայսրության պարտությունն Առաջին աշխարհամարտում և Թուրքիայի պատմության մեջ մտավ որպես Մուդրոսի զինադադար (*Mondros Mütarekesi*)<sup>11</sup>:

<sup>10</sup> Նա ստացել է այդ ազգանունը 1934 թ. խորհրդարանի՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (հետազայում՝ ԹԱՄԾ) կողմից ընդունված հատուկ օրենքով:

<sup>11</sup> Զինադադարի անգլերեն տեքստը տես. Sir Frederick Maurice, *The Armistices of 1918. London, New York, Toronto, 1943, pp. 85-87.* Թուրքերեն թևնական տեքստը տես. Nihat Erim, Devletlerarası Hukuku Ve Siyasi Tarih Metinleri Cilt: I (Osmanlı İmparatorluğu Andlaşmaları). Ankara, 1953, s. 519-524.

Զինադադարի տեքստը բաղկացած էր 25 կետից, որոնք նախատեսում էին Բոսֆորի և Դարդանելի նեղուցների, ինչպես նաև Տավրոսի թռնելների համակարգի և մի շարք կարևոր նավահանգիստների անցում Անտանտի դաշնակից երկրների անմիջական հսկողության տակ: Անհրաժեշտության դեպքում, եթե վտանգ էր սպառնում դաշնակիցներին, նրանք իրավոնք էին ստանում գրավելու կայսրության տարածքում գտնվող բոլոր ռազմավարական նշանակություն ունեցող շրջանները:

Զինադադարի պայմանները թուրքերին թելադրվել էին բրիտանացիների կողմից: Վերջիններս էլ, նպատակ ունենալով հերթական անգամ օգտագործել թուրքական զորքը ոռուների դեմ, որոշեցին չպահանջել օսմանյան բանակի ամբողջական զորացրում: Զինադադարը նախատեսում էր, որ կապահպանվեն այն ստորաբաժանումները, որոնք անհրաժեշտ են «սահմանների և ներքին կարգուկանոնի» պահպանման համար: Այս կետն ունեցավ ճակատագրական նշանակություն, քանի որ հետագայում հնարավորություն տվեց թուրք ազգայնականներին օգտագործել այդ ստորաբաժանումները զինված պայքար ծավալելու համար:

Մուտքոսի զինադադարի մի քանի կետեր (4, 11, 15, 16, 24) ուղղակիորեն առնչվում էին Հայաստանի շահերին: Այսպես, օրինակ, նախատեսվում էր, որ թուրքերի կողմից գերեվարված և բռնագաղթեցված բոլոր հայերը պետք է տեղափոխվեին մայրաքաղաք Կոստանդնուպոլիս և հանձնվեին դաշնակիցներին: Թուրքական զորքերը դուրս էին բերվում Անդրկովկասի որոշ շրջաններից և Հայոց Կիլիկիայից: Հայկական վի-

լայեթներից որևէ մեկում անկարգությունների դեպքում դաշնակիցներն իրավունք էին ստանում անհապաղ գրավելու այն:

Վերը նշված կետերը նպաստավոր էին հայ ժողովրդի համար: Սակայն այն հանգամանքը, որ զինաթափ չարվեցին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասի մի շարք շրջաններում տեղակայված օսմանյան կանոնավոր բանակի ստորաբաժանումները, նշանակում էր, որ Հայոց անկախ պետականությունը լրջորեն վտանգված էր և ցեղասպանությունից փրկված հայության մնացորդները կանգնած էին նոր կոտորածների վտանգի առջև: Հիշեցնենք, որ դրանք այն ստորաբաժանումներն էին, որոնք մասնակցել էին հայ ժողովրդի բնաջնջմանը 1915-1916 թթ. Արևմտյան Հայաստանում և 1918 թ.: Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասի այլ հայաշատ վայրերում:

Մուղրոսի զինադադարը փաստեց, որ Անտանտի անդամ պետությունները, առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիան, հերթական անգամ զոհաբերեցին հայ ժողովրդի կենսական շահերը հանուն իրենց աշխարհաքաղաքական հաշվարկների:

Զինադադարն ուժի մեջ մտավ հոկտեմբերի 31-ին, ինչից հետո իրադարձությունները Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կոստանդնոպոլսում սկսեցին արագ զարգանալ: Արդեն հաջորդ օրը՝ նոյեմբերի 1-ին, երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը պաշտոնապես հայտարարեց, որ դադարում է գոյություն ունենալ: Նոյն օրվա գիշերը Թալեւաթը, Էնվերը, Զեմալը և երիտթուրքերի 4 այլ պարագլուխներ գերմանական ռազմանավով գաղտնաբար լքեցին երկիրը: Նոյեմբերի 6-ին զինաթափվեցին օսմանյան

բանակի նեղուցները պաշտպանող ստորաբաժանումները՝ դաշնակիցների նավերի համար ճանապարհ բացելով դեպի մայրաքաղաք: Արդեն հաջորդ օրը նրանք մտան Բուֆոր և խարիսխ նետեցին մայրաքաղաքում: Մեկ շաբաթ անց՝ 1918 թ. նոյեմբերի 13-ին, Անտանտի երկրների նավերից ափ իջեցվեց 3500 զինվոր, որոնք հսկողություն հաստատեցին մայրաքաղաքի կարևոր կետերի վրա:

Այսպես սկիզբ առավ Օսմանյան կայսրության պատմության վերջին շրջանը: Թուրքական պաշտոնական պատմագրության մեջ իրադարձությունները, որոնք տեղի էին ունենում Անտանտի երկրների կողմից գրավված մայրաքաղաքում և որոնց մասնակցում էին սովորանք և նրա կողմից ստեղծված կառավարությունները, ընդունված է անվանել «զինադադարի շրջան» (Mütareke Devri):

Թուրքական աղբյուրները վկայում են, որ Մուսթաֆա Քեմալը սկզբում Մուդրոսի զինադադարի որոշ կետեր ընդունելի էր համարում, քանի որ այն համապատասխանում էր ստեղծված իրադրությանը, երբ նույնիսկ «Բուլղարիան էր ավելի ուժեղ» Օսմանյան կայսրությունից<sup>12</sup>: Սակայն հետագայում նա որդեգրեց խիստ բացասական վերաբերմունք Մուդրոսի զինադադարի նկատմամբ և առիթը բաց չէր թողնում քննադատելու ինչպես նրա առանձին կետերը, այնպես էլ համաձայնագիրն ընդհանրապես: Նա այդ անում էր և՝ պաշտոնական գրագրության միջոցով, և՝ մամուլին տված հարցազրույցնե-

<sup>12</sup> Sonyel, R. Salâhi, Gizli Belgelerde Mustafa Kemal, Vahdettin ve Kurtuluş Savaşı. Ankara, 2010, s. 6.

*204429*

րում<sup>13</sup>: Որոշ հետազոտողներ պնդում են, որ գինադադարի մասին տեղեկանալուց արդեն մի քանի օր հետո Քեմալը սկսել է հորդորել Աղանայի թուրք ազգարնակցության ներկայացուցիչներին պատրաստվել գինված պայքարին հաղթող երկրների դեմ<sup>14</sup>:

Ուշագրավ է, որ այդ տեղեկության աղբյուրը հենց ինքն է՝ Մուսթաֆա Քեմալը: Նա այդ մասին հայտնել է 1923 թ.<sup>15</sup>: Ակնհայտ է, որ այդպիսով նա նպաստում էր հասարակական ընկալումներում իր իսկ առասպելականացված կերպարի ձևավորմանը և ձգտում էր դրանով էլ ավելի ամրապնդել իր դիրքը որպես թուրք ազգի միակ առաջնորդ:

Հետևելով Մուսթրոսի գինադադարի և Անտանտի հաղթանակած դաշնակից երկրների պահանջներին՝ օսմանյան բանակի հրամանատարությունը լուծարեց Յըլլըրըմ բանակային խումբը: Դրանից անմիջապես հետո՝ նոյեմբերի 7-ին, հետևեց սովորական Վահեդութինի իրադեն (հրամանը)<sup>16</sup>, որով նա հրամայում էր Մուսթաֆա Քեմալին վերադառնալ մայրաքաղաք և անցնել ուզմական նախարարության տրամադրության տակ:<sup>17</sup>:

<sup>13</sup> Տե՛ս այդ մասին. Kemal Cemal, Mustafa Kemal'in Mondros Mütarekesi'ne Tepkisi, - Ankara Üniversitesi Türk İnkılâp Tarihi Enstitüsü Atatürk Yolu Dergisi, S. 46, Güz 2010, s. 367-400.

<sup>14</sup> Mango Andrew, Atatürk: The Biography of the Founder of Modern Turkey. New York, 2002, p. 193.

<sup>15</sup> Նոյն տեղում:

<sup>16</sup> Այն ստորագրել էր նաև սաղյացամ (վարչապետ) ու ուզմական նախարար Սհմեր Իզզեթ Փաշան:

<sup>17</sup> Տե՛ս իրադեի տեքստում. Sadrazam ve Harbiye Nâziri Ahmed İzzet, Mehmed Vahideddin, İrâde-i Seniyye, Fî 2 Safer Sene 1337 - Fî 7 Teşrin-i Sânî

Այդ իրամանը համապատասխանում էր Մուսթաֆա Քեմալի ցանկություններին, քանի որ այդպիսով նա օրինական հնարավորություն էր ստանում հայտնվելու մայրաքաղաքում և սկսելու անմիջական անդրկույսյան պայքար բարձր պաշտոնների համար: Դրանից մոտավորապես մեկ ամիս առաջ նա արդեն փորձել էր ստանալ ուազմական նախարարի պաշտոնը, սակայն հնարավորություն չունենալով մեկնելու մայրաքաղաք և տեղում մտնելու պայքարի մեջ հանուն պաշտոնի՝ մատնվել էր անհաջողության:

Նա ձգտում էր հնարավորինս արագ օգտվել ստեղծված իրադրությունից, քանի որ հասկանում էր, որ երիտթուրքական կուսակցության պարագլուխների փախուստից հետո կառավարման բարձրագույն հատվածում տիրում է խիստ անորոշ իրավիճակ, քանի որ երիտթուրքերը ողջ իշխանությունը կենտրոնացրել էին իրենց ղեկավար մարմնի՝ Կենտրոնական կոմիտեի անդամների մի մասից կազմված մի փոքր խմբի ձեռքում, Թալեաթի և Էնվերի գլխավորությամբ: Այժմ, երբ նրանք լքել էին երկիրը, իրական իշխանության ամենավերևի օղակը մնացել էր դատարկ, քանի որ երիտթուրքերին հաջորդած կառավարությունը լիովին չէր տիրապետում իշխանական լծակներին:

---

sene 1334: Harbiye Nezâreti, Muamelât-ı Zâtiye Müdürlüğü 700, DUİT, 163/20\_1-3, - [Atatürk], Osmanlı Belgelerinde Millî Mücadele ve Mustafa Kemal Atatürk. Yayına Hazırlayanlar: Kemal Gurulkan, Yusuf İhsan Genç, Dr. Mustafa Küçük ve Ötekiler, Baskıya Hazırlayanlar: Murat Şener, Salih Dutoğlu. Ankara, 2007, s. 304-305.

Մուսթաֆա Քեմալը, լինելով օսմանյան անդրկովիսյան քաղաքական գործընթացների և ինտրիգների ոլորտում նշանակալի փորձառություն ձեռք բերած անձնավորություն, քաջ գիտակցում էր, որ ստեղծված իրավիճակում իր համար հնարավորություններ էին բացվում ճանապարհ հարթելու դեպի կայսրության իշխանական բուրգի բարձրագույն օղակները:

Սկզբում հնարավորություն չունենալով մտնել անմիջական պայքարի մեջ իշխանության համար, քանի որ իրավոնք չուներ լրելու Յըլլըրըմ բանակային խմբի կազմի մեջ մտնող 7-րդ բանակի հրամանատարի պաշտոնը, նա, ինչպես արդեն նշել ենք վերևում, որոշեց գործել՝ չսպասելով, թե երբ հնարավորություն կստեղծվի մեկնել մայրաքաղաքը:

Արդեն 1918 թ. հոկտեմբերի 14-ին, այսինքն՝ Թալեաթի ղեկավարած երիտրութերի կառավարության հրաժարականից մեկ շաբաթ էլ չանցած, նա սովորանի գիշավոր համհարզին հույժ գաղտնի հեռագիր հղեց, որն անձամբ նրան հանձնեց մայրաքաղաքում գտնվող Քեմալի վստահելի ընկերներից բժիշկ Ռասիմ Ֆերիթը<sup>18</sup>:

Գաղտնիության այդպիսի բարձ մակարդակը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Քեմալն այդ հեռագրով սկսում է, ըստ էության, պայքար հանուն իշխանության՝ շարունակելով գտնվել զիսվորական ծառայության մեջ:

---

<sup>18</sup> Տե՛ս այդ մասին. Şahin Mustafa, Cumhuriyet'in Temelinin Atılması Yolunda Atatürk'ün Mondros Mütarekesi Sonrası Şişli Günleri, - Sosyal Bilimler Dergisi, Atatürk Üniversitesi Edebiyat Fakültesi, Sayı 55, Aralık 2015, s. 216.

Հեռագրով նա պահանջում էր հայտնել սովորականին, որ ակնկալում է, թե կազմվող նոր կառավարությունում իրեն կիանձնվի նախարարի պաշտոն<sup>19</sup>:

Այլ պայմաններում և գուցե նաև այլ անձի նկատմամբ կկիրառվեին կարգապահական խստագույն միջոցները: Սակայն Մուսթաֆա Քեմալի նկատմամբ այդպիսի միջոցներ չկիրավեցին:

Սակայն նրա հավակնությունները դրանով չեն սահմանափակվում, քանի որ նա թելադրում էր սովորականին նոր ստեղծվող կառավարության հիմնական անդամների պաշտոններում նշանակել իր մի շարք ընկերներին: Նույնիսկ սադրազամի (վարչապետի) թեկնածությունն էր նշվում նրա կողմից<sup>20</sup>: Այսինքն՝ Քեմալը ծրագրել էր Օսմանյան կայսրությունում իշխանության զավթում իր և իր դավադիր ընկերների կողմից:

Սակայն դավադիր փաշան գերազահատել էր հեղինակությունը: Սովորանը չարձագանքեց նրա պահանջին, և նա պաշտոն չստացավ նոր կառավարությունում, ի տարբերություն իր որոշ ընկերների, որոնք նշանակվեցին կառավարության կազմում տարբեր նախարարների պաշտոններում: Վեր-

<sup>19</sup> Տե՛սագրի տեքստում. Yeni Bir Kabinetin Kurulması Gereği, Başyaver Naci Bey'e, 14.10.1918, Çok Gizlidir. - [Atatürk], Gazi Mustafa Kemal Atatürk'ten Bize: Söylevleri, Konuşmaları, Söyleşileri, Anıları, Genelgeleri, Yazışmaları (1903 -1938). Cilt I (1903 - 22/4/1920). İstanbul, 1987, s.245.

<sup>20</sup> Yeni Bir Kabinetin Kurulması Gereği, Başyaver Naci Bey'e, 14.10.1918, Çok Gizlidir. - [Atatürk], Gazi Mustafa Kemal Atatürk'ten Bize: Söylevleri, Konuşmaları, Söyleşileri, Anıları, Genelgeleri, Yazışmaları (1903 -1938). Cilt I (1903 - 22/4/1920). İstanbul, 1987, s. 245.

զիններիս թվում էր նաև Ռատոֆ բեյը<sup>21</sup> Քեմալի մոտիկ ընկերներից մեկը: Երբ Քեմալը եկավ մայրաքաղաք ու շարունակեց իր դավադիր գործունեությունը, Ռատոֆը դարձավ նրա հավատարիմ զինակիցներից մեկը:

Իշխանությունը զավթելու անհաջող փորձից հետո Քեմալը չհուսահատվեց և չիրաժարվեց իր այդ մտադրությունից: Նա ուղղակի փոխեց մարտավարությունը, քանի որ իր համար պարզ դարձավ, որ նույնիսկ այն քառսային իրավիճակի պայմաններում, որը, նրա կարծիքով, տիրում էր մայրաքաղաքում, ինարավոր չէ պայքարել իշխանության համար հարյուրավոր կիլոմետրերի հեռավորությունից: Անհրաժեշտ է անձամբ լինել իրադարձությունների կիզակետում:

Վերը նշված հանգամանքն էր պատճառը, որ Մուսթաֆա Քեմալը շատ արագ ենթարկվեց սովորականի հրամանին և անհապաղ մեկնեց մայրաքաղաք՝ իշխանության կենտրոնում շարունակելու պայքարը հանուն իշխանության:

## 1. ԻՇԽԱՆԱՏԵՆՉՈՒ ԴԱՎԱԴԻՐ ՓԱՇԱՆ ՄԱՅՐԱՔԱՐԱՔՈՒՄ

Սոյն ենթագլուխն ունի կարևոր նշանակություն, քանի որ այստեղ արծարծվող հարցերի պարզաբանումը ինարավո-

<sup>21</sup> Հետազայում՝ զբաղեցրել է բարձր պաշտոններ քեմալական շարժման և Թուրքիայի Հանրապետության շրջաններում: Ընդունել է Օրբայ ազգանունը:

րություն է տալիս ավելի խորը վերլուծել ու մեկնաբանել ինչպես Մուսթաֆա Քեմալի քաղաքական կերպարն ընդհանրապես, այնպես էլ նրա գործունեությունը՝ ուղղված Հայաստանի Հանրապետության դեմ:

1918 թ. նոյեմբերի 13-ին Մուսթաֆա Քեմալն արդեն մայրաքաղաքում էր: Այդ նույն օրն Անտանտի գինված ստորաբաժանումները հսկողության տակ վերցրեցին Կ.Պոլսի ռազմավարական նշանակության կետերը: Բնակչությունը դրական մոտեցում ցուցաբերեց նրանց նկատմամբ: Թերևս, դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ նրա մեծ մասը կազմում էին քրիստոնյաները, իսկ մահմեդականների մեջ մեծ թիվ էին կազմում ոչ թուրքերը<sup>22</sup>:

Կոստանդնուպոլիսի այդ շրջանի առանձնահատկությունն այն էր, որ այստեղ էր կոտակված շուրջ տասը տարի կայսրությունը կառավարած երիտթուրքական կուսակցության ընտրանու հիմնական հատվածը: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում Հայոց ցեղասպանության համար պատասխանատու հանցագործները, որոնք զգում էին իրենց գլխին կախված վտանգը՝ ձերբակալվելու և պատասխան տալու կատարած ոճագործությունների համար: Ընդհանուր առմամբ, մայրաքաղաքում մնացած երիտթուրքերը հիմնականում ջախջախված, հուսահատ, բարոյազուրկ մարդկանց մի քառսային

<sup>22</sup> Criss Nur Bilge. Istanbul under Allied Occupation 1918-1923. Leiden: Brill, 1999, p. 7.

խումբ էին ներկայացնում<sup>23</sup>: Սակայն այդ հանցավոր կուսակցության հանցավոր գաղտնի կազմակերպությունը՝ Թեշքիլյաթ-ը Մահսուսա-ն (Հատուկ կազմակերպություն), շարունակում էր իր գործունեությունը: Ավելին, երիտթուրքերի պարագլուխները երկրից գաղտնի փախուստի դիմելուց առաջ հասցրել էին ստեղծել մեկ այլ գաղտնի կազմակերպություն՝ Քարաքուլ-ը, նպատակ ունենալով նրա միջոցով նախապատրասել իրենց վերադարձը երկիր և իշխանության:

Ժամանելով մայրաքաղաք՝ Մուսթաֆա Քեմալը սկզբում բնակություն հաստատեց այն ժամանակվա ամենահայտնի հյուրանոցում՝ «Փերա Փալասում» և մի քանի օր հետո տեղափոխվեց իր ընկերներից մեկի տուն: Սակայն մտավախություն ունենալով, որ կարող է ձերբակալվել դաշնակիցների կողմից, որոշեց փոխել բնակության վայրը: Նա վարձեց երեքհարկանի տուն Շիշլի թաղամասում և 1918 թ. դեկտեմբերի 2-ին տեղափոխվեց այնտեղ: Այդ տան տիրուհին հայուիի էր, Անիկ Քասարյան անունով<sup>24</sup>: Այստեղ նա ապրեց շուրջ հինգ ամիս, մինչև մեկնելը Արևելք:

Մուսթաֆա Քեմալը Կ.Պոլսում անմիջապես նետվեց քաղաքական ինտրիգների հորձանուտը՝ նպատակ ունենալով իրականացնել իշխանության բարձրագույն օղակներում տեղ գրադեցնելու մասին իր վաղեմի երազանքը: Նրա հաշվարկը

<sup>23</sup> Akal Emel, Mustafa Kemal, İttihat Terakki ve Bolşevizm Milli Mücadelenin Başlangıcında. 2. Basım (Genişletilmiş ve Gözden Geçirilmiş). İstanbul, 2006, s. 141.

<sup>24</sup> Şahin Mustafa, Cumhuriyet'in Temelinin Atılması Yolunda Atatürk'ün Mondros Mütarekesi Sonrası Şişli Günleri, - Sosyal Bilimler Dergisi, Atatürk Üniversitesi Edebiyat Fakültesi, Sayı 55, Aralık 2015, s. 219.

միանգամայն պարզ էր. օգտվել այն հանգամանքից, որ երիտթուրքերի պարագլուխները դիմել են փախուստի և երկրի հշխանական շրջանակներում առաջացել է քառսային իրավիճակ, փորձել զավթել իշխանությունը: Այդ նպատակին հասնելու համար նրան անհրաժեշտ էր ձեռք բերել աջակիցներ, որոնք կարող էին նպաստել նրա թոփքին դեպի իշխանության բարձունքները:

Ոշագրավ ու խորհրդանշական էին նրա առաջին երեք հանդիպումները, որոնք տեղի ունեցան մայրաքաղաք Ժամանելուց մեկ օր Էլ չանցած՝ նոյեմբերի 14-ին: Եթե դրանցից երկուսը, հանդիպումը և երկար զրոյցը վաղեմի ընկեր՝ արդեն իսկ մեր կողմից հիշատակված Ռաուֆ բեյի հետ և դրանից հետո նրանց համատեղ այցը նախկին սաղրազամ Ահմեթ Իզզեթ փաշային, լայնորեն լրսաբանվել են թուրքական պատմագրության կողմից, ապա երրորդի վերաբերյալ լավատեղյակ թուրք հեղինակները, որոնք ուսումնասիրել են Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի կյանքն ու գործունեությունն ամենայն մանրամասնությամբ, գերադասում են սահմանափակվել փաստի զուտ շարադրանքով:

Պատճառն այն է, որ Մուսթաֆա Քեմալի այդ հանդիպումը, որը տեղի էր ունեցել իր նախաձեռնությամբ ու խնդրանքով, ոչ միայն չի համապատասխանում նրա «պաշտոնական» առասպելականացված կերպարին, այլ նաև ներկայացնում է նրան խիստ անբարենպաստ լուսի ներքո, քանի որ, փաստութեն, Քեմալն առաջարկեց բրիտանացիներին իր ծառայությունները: Խոսքն անգիտացի լրագրող, «Դեյլի Մեյլ» թերթի Կ.Պոլսի թղթակից Վորդ Փրայսի հետ հանդիպման մասին է:

Հավ իմանալով, որ նա կապված է բրիտանական հետախուզության հետ, Քեմալը ներկայացրեց նրան հետևյալ ծրագիրը. բրիտանացիները ստանձնում են «Անատոլիայի», այսինքն՝ Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող արևելյան շրջանների, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի մանդատը և նշանակում են իրեն այդ շրջանների կառավարիչ՝ հաշվի առնելով նրա հարուստ փորձառությունը: Մուաթաֆա Քեմալի սույն առաջարկի մասին տեղեկության աղբյուրն ինքը՝ Վլորդ Փրայսն է, որը դրա մասին գրել է իր հուշերում, որոնք լույս տեսան 1957 թ.: Գիտական շրջանառության մեջ այդ տեղեկությունը դրել է բրիտանացի պատմաբան, Աթաթյուրքի հիմնարար կենսագրության հեղինակ Լորդ Քինրոսը:<sup>25</sup>

Լրագրողը հայտնել է այդ առաջարկի մասին բրիտանական ուազմական հետախուզության ներկայացուցիչն, վերջինս, սակայն, անուշադրության է մատնել այն՝ համարելով ոչ կարևոր:<sup>26</sup> Հասկանալի է, որ Քեմալը ոչ մի տեղ չի անդրադառնում իր կենսագրության այս մութ էջին: Չե՞ որ այն ակնհայտորեն վկայում է, որ նա պատրաստ է եղել հավաքագրվել բրիտանական հետախուզության շարքերում և ծառայել Լոնդոնի շահերին: Եվ այդ արվում էր հանոն իշխանության...

<sup>25</sup> Տե՛ս. Lord Kinross, Ataturk: The Rebirth of a Nation, London: Weidenfeld and Nicolson, 1965, p. 141-142. Նրան անդրադառնում են նաև մի շարք այլ պատմյան հեղինակավոր մասնագետներ: Տե՛ս. Zürcher Erik Jan, The Unionist Factor: The Role of the Committee of Union and Progress in the Turkish National Movement 1905 – 1926. Leiden: E. J. Brill, 1984, p. 107; Mango Andrew, Atatürk: The Biography of the Founder of Modern Turkey. New York: The Overlook Press, 2002, p. 201-202.

<sup>26</sup> Mango Andrew, Atatürk: The Biography of the Founder of Modern Turkey. New York: The Overlook Press, 2002, p. 202.

Վերևում նշված փորձը՝ կապ հաստատել բրիտանացիների հետ, պատահական չէր: Այն արդյունք էր համոզմունքի, որ բրիտանացիները հիմնականում դրական են տրամադրված Օսմանյան կայսրության նկատմամբ: Այդ միտքը Քեմալն արտահայտեց «Վաքիթ» թերթին տված հարցազրույցում՝ կոչ անելով կառավարությանն արագ հասկանալ, թե ինչ են նրանք ցանկանում, և գործել համապատասխան<sup>27</sup>:

Ռազմավարական տեսակետից Քեմալն իրավացի էր, քանի որ Մեծ Բրիտանիան ավանդորեն դիտարկում էր Թուրքիան որպես հակակշիռ Ռուսաստանի նվաճողական նկրտումների նկատմամբ, որոնց նպատակակետերը Բոսֆորի ու Դարդանելի նեղուցներն էին և Միջերկրական ծովը: Ըստ ամենայնի, լինելով բարձրաստիճան զինվորական՝ նա հավատացած էր, որ բրիտանացիները կշարունակեն իրենց այդ ռազմավարությունը նույնիսկ Առաջին աշխարհամարտից ու Ռուսական հեղափոխությունից հետո:

Քեմալի կենսագիրները փաստում են, որ նա այդ անհաջողությունից հետո չհուսահատվեց և մայրաքաղաքում գտնվելու առաջին օրերին շարունակում էր հանդիպումներ ունենալ բրիտանական ներկայացուցիչների հետ՝ վնտրելով նրանց իր ծառայություններն առաջարկելու հնարավորություններ: Այսպես, Փրայսի հետ հանդիպումից մեկ օր հետո նա հանդիպեց

<sup>27</sup> Stein harpgazetesi'ndeki tatbik tarzı. Mondros Mütarekesinin Tatbik Tarzi (18. XI. 1918): Vakit Gazetesi Muhabirine Demeç, - [Atatürk], Atatürk'un Söylev ve Demeçleri. III: 1918-1937 (Açıklamalı Dizin İle). 5 Baskı. [Ankara], 2006, s. 1.

բրիտանացի գեներալ Վիլյամ Բըրոդվուրի հետ<sup>28</sup>: Նա հուշեր չի թողել, ինչը նշանակում է, որ երբեք հայտնի չի դառնա նրանց զրոյցի իրական թեման:

Ինչպես արդեն նշել էինք վերևում, անգլիացիներն անտեսեցին Մուսթաֆա Քեմալի առաջարկը: Սակայն իրադարձությունների հետագա ընթացքը վկայում է, որ նրանք չեն մոռացել այդ թուրք փաշայի հավատարմության խոստովանությունը: Օրինակ, եղր 1919 թ. հունվարին սկսվեցին երիտրուրքական կուակցության առաջատար գործիչների ծերբակալությունները և նրանց աքսորումը Մայթա կղզի, նրան ծեռք չտվեցին, չնայած ծերբակալվածների թվում էին նաև Քեմալի մի շարք մոտիկ ընկերները և համախոհները, ում հետ նա ներգրավված էր ակտիվ ընդհատակյա դավադրական գործունեության մեջ: Կամ էլ, Մուսթաֆա Քեմալի նշանակումը սովորական կողմից բարձր գինվորական պաշտոնում կայսրության արևելյան նահանգներում տեղի էր ունեցել անգլիացիների հավանությամբ: Բրիտանական հետախուզության գործակալ Զոն Բենեթն իր հուշերում վկայում է, որ երբ նա կասկած է հայտնել, թե արդյոք կարելի է տրամադրել Մուսթաֆա Քեմալին արտոնագիր և թույլ տալ նրան մեկնելու արևելյան վիլայեթներ, նա ստացել է Մեծ Բրիտանիայի Բարձրագույն հանձնակատարի գրասենյակից կարգադրություն՝ տրամադրել նրան արտոնագիր<sup>29</sup>:

<sup>28</sup> Kocatürk Utkan, Doğumundan Ölümüne Kadar Kaynakçalı Atatürk Günüluğu, İlkinci Basım, Ankara: AKDTYK Atatürk Araştırma Merkezi, 2007, s. 119.

<sup>29</sup> [Benneth] Witness: The Autobiography of John G. Benneth, Tucson: Omen Press, 1974, p. 14.

Բրիտանացիները գիտակցեցին իրենց սխալը միայն այն ժամանակ, երբ Մուսթաֆա Քեմալն ամրապնդել էր իր դիրքերը որպես հակապետական ապստամբական շարժման առաջնորդ, սակայն արդեն ուշ էր...

Մուսթաֆա Քեմալ Աթաթօւրքի առասպելականացված պաշտոնական կերպարի կարևոր մասն է կազմում պնդումը նրա խիզախության, անձնազոհության մասին: Անտարակոյս, նա խիզախ սպա էր: Սակայն միաժամանակ նրա մարդկային էության անբաժանելի մասն էր կազմում նրա հոգեկան շեղումների համար վախն իր կյանքի համար, ինչը հանգեցնում էր ծայրահեռ կասկածամտության: Մի շարք փաստեր վկայում են, որ Քեմալը, տեսնելով, որ բրիտանացիների վստահյալ անձը դառնալու իր ջանքերն արդյունք չեն տվել, սկսել էր վախենալ, որ ինքը նույնպես կարող է իր ընկերների նման, որպես աչքի ընկնող երիտթուրք, ձերբակալվել նրանց կողմից: Դրանից խուսափելու նպատակով նա կապ էր հաստատել մայրաքաղաքում տեղակայված Խուլիհայի Բարձր հանձնակատար իշխան Կարլո Սֆորզայի հետ և խնդրել էր Շիշլի թաղամասի իր տունը վերցնել խուլական բանակի ստորաբաժանման պաշտպանության ներքը<sup>30</sup>:

Կյանքի համար վախի չափազանց սուր զգացողությունը սովորաբար հատուկ է բռնակալներին, որոնց թվին, անտարակոյս, պատկանում է նաև Մուսթաֆա Քեմալը: Այդ տեսակետից նա նմանվում է վախկոտ ու կասկածամիտ բռնակալ սուլթան Արդուլ Համիդ Երկրորդին: Սակայն ի տարբերություն

<sup>30</sup> Տես այդ մասին. Mango Andrew, Ataturk: The Biography of the Founder of Modern Turkey. New York: The Overlook Press, 2002, p. 205.

վերջինի, Քեմալը ոչ միայն շատ ավելի լավ էր տիրապետում իրականությունը թաքցնելու և խեղաթյուրելու արվեստին, այլ նաև կարողանում էր վարպետորեն մանհապովացիայի Ենթարկելով այն՝ արդյունքում ստանալ մի այնպիսի պատկեր, որը թիւ աղերսներ ուներ իրականության հետ: Համենայն դեպս, այդ է վկայում նրա կյանքի այն մութ էջը, որին մենք անդրադարձանք վերևում:

Ինչպես արդեն նշել ենք, իր գործունեությունը մայրաքաղաքում Մուսթաֆա Քեմալը սկսեց երեք հանդիպումից: Դրանք ունեին խորհրդանշական նշանակություն և հնարավորություն են տայիս հասկանալու մայրաքաղաքում ծավալած նրա բուռն գործունեության հիմնական ուղղությունները, որոնց նպատակն էր, ինչպես արդեն նշել ենք, հասնել իշխանության բարձրագույն օդակներին:

Այդ տեսակետից, պատահական չէր այդ օրվա վերջին հանդիպումը, երբ նա իր ընկեր Ռաուֆ բեյի հետ այցելեց արդեն պաշտոնաթող նախկին սադրազամ Ահմեթ Իզզեթ փաշային: Այդ այցելության նպատակն էր առաջարկել վերջինիս գործարք, որի իմաստը հետևյալն էր. Քեմալը, օգտագործելով իր կապերը մայրաքաղաքում մնացած երիտթուրքերի շրջանում, նպաստում է, որ Իզզեթ փաշան վերադառնա սադրազամի պաշտոնին, ինչի փոխարեն ստանում է երազած ուազմական նախարարի պաշտոնը: Սակայն այդ գործարքը ծախողվում է: Չեն հաջողվում Մուսթաֆա Քեմալին նաև նմանատիպ մի շարք այլ նախաձեռնություններ: Նա այդպես էլ չի հասնում բաղձայի նպատակին: Ըստ ամենայնի, նրա այդ ծրագրերի տապալման պատճառն այն էր, որ նրան չի հաջող-

վում ձեռք բերել հրապարակային գործունեությամբ զբաղվող երիտթուրքերի վստահությունը:

Փոխարենը, ավելի հաջող ընթացք են ստանում Մուսաֆա Քեմալի շփումները «Քարաքոլ» գաղտնի կազմակերպության հետ: Ավելին, կան փաստեր, որոնք վկայում են, որ Քեմալին՝ մի քանի մոտիկ ընկերների հետ համատեղ, հաջողվել էր հսկողության տակ վերցնել «Քարաքոլի» գործունեությունը, ծառայեցնել նրան իրենց նպատակներին: Այսպես, հայտնի է, որ «Քարաքոլը» նրանց պարբերաբար գեկուցել է բրիտանական գործակալների գործունեության մասին<sup>31</sup>:

Պահպանվել են տեղեկություններ այն մասին, որ Քեմալը ներգրավված է եղել «Քարաքոլի» ղեկավարներից Քարա Քեմալի հետ համատեղ ռազմական հեղաշրջում կազմակերպելու վերաբերյալ քննարկումների մեջ, առաջարկել է գահընկեց անել Վահեդդինին և նրա տեղը գահ բարձրացնել մեկ այլ սուլթանի, համաձայնել է, որ անհրաժեշտ է առևանգել երիտթուրքերի հակառակորդ համարվող գործիչներից մեկին: Այդ դավադիր ծրագրերը չեն իրականացել միայն այն պատճառով, որ Մուսաֆա Քեմալի մոտիկ ընկերներից համայի Զանբուլաթը դեմ է եղել այդ մտադրությունն իրականացնելուն<sup>32</sup>: Ընդգծենք, որ նա երիտթուրքերի կառավարման տարիներին զբաղեցրել մի շարք կարևոր պաշտոններ, եղել է

<sup>31</sup> Müezzinoğlu Ersin, Millî Mücadele Döneminde İttihatçılar Üzerine Bir Değerlendirme. - İnsan ve Toplum Bilimleri Araştırmaları Dergisi, Cilt: 5, Sayı: 8, 2016, s. 2918.

<sup>32</sup> Ünal Serkan, Mustafa Kemal Paşa'nın Mütareke İstanbul'undaki Faaliyetleri. - Tarih Okulu Dergisi (TOD), Eylül 2014, Yıl 7, Sayı XIX, s. 609-610.

Կենտրոնական կոմիտեի անդամ և Հայոց ցեղասպանության հիմնական պատասխանատուներից է, համաձայն բրիտանացիների կազմած երիտթուրք հանցագործների դոսեների<sup>33</sup>:

Փաստորեն, Քեմալը և նրա այդ շրջանի ամենամոտիկ ընկերները՝ Ֆեթիհն<sup>34</sup>, Ռաուֆը և վերը նշված Զանբուլարը ստեղծել էին դավադիրների մի խոմբ, որի նպատակն էր գերիշխանություն հաստատել «անզլուխ» մնացած հանցագործների այն ավագակախմբի վրա, որն իրեն անվանում էր «Միություն և առաջադիմություն» կուսակցություն և որի անդամներից շատերի ձեռքերը թաթախված էին Հայոց ցեղասպանության հարյուր հազարավոր զոհերի արյան մեջ: Թուրք հեղինակներից է. Ս. Յալչինը պնդում է, որ այդ դավադիրները ստեղծել էին «Հեղափոխական կոմիտե»<sup>35</sup>:

Ապագա «ավագակապետերը» վստահ էին, որ կիասնեն իրենց նպատակին: Թուրք հետազոտողներից մեկը գրում է, որ նրանք իրենց համարում էին «իշխանության բնական թեկնածուներ»<sup>36</sup>:

<sup>33</sup> British Foreign Office Dossiers on Turkish War Criminals. By Vartkes Yeghiayan. La Verne: American Armenian International College, 1991, p. 54.

<sup>34</sup> Լրիվ անունը՝ Ալի Ֆեթիի, հանրապետական շրջանում ընդունել է Օյյար ազգանունը: Եղել է երիտթուրքական կուսակցության ակտիվ անդամներից, մաս է կազմել նրա իշխող վերնախավախ: Ըստրվել է այդ կուսակցության զիսավոր քարտուղար: Քեմալական շարժման և հանրապետական շրջանում գրադեցրել է մի շարք քարձրազույն պաշտոններ:

<sup>35</sup> Yalçın E. Semih, - Mütareke Döneminde Mustafa Kemal Paşa'nın İstanbul'daki Faaliyetleri (30 ekim 1918-16 Mayıs' 1919), - Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Tarih Bölümü Tarih Araştırmaları Dergisi, Cilt:17, Sayı: 28, 1995, s. 188-189.

<sup>36</sup> Koç Nurgün, Milli Mücadelenin Başlarındaki Gelişmelerin Hatırlar Çerçevesinde Değerlendirilmesi - Assessment of the developments at the beginning

Ինչքանո՞վ էին հիմնավոր նրանց և, առաջին հերթին, Մուսթաֆա Քեմալի հավակնությունները:

Այդ հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է անդրադառնալ նրա՝ «Միություն և առաջադիմություն» կուսակցության և վերջինիս ղեկավարության ստեղծած գաղտնի կազմակերպությունների հետ առնչությունների խնդրին:

«Միություն և առաջադիմություն» կուսակցությանը Մուսթաֆա Քեմալի անդամակցության խնդիրը բազմից քննարկվել է մասնագիտական գրականության մեջ: Վերջին շրջանում հրատարակված մի շարք աշխատությունների հեղինակների հավաքած բազմաթիվ փաստերն անհերքելիորեն վկայում են, որ նա եղել է այդ կուսակցության անդամ և մաս է կազմել նրա ղեկավար խմբավորման<sup>37</sup>: Որոշ լավատեղյակ հեղինակներ գրում են, որ նա եղել է նաև այդ կուսակցության գաղտնի կազմակերպության՝ «Շեշքիյաթ-ը Մահսուայի» «ամենավստահելի» անդամներից մեկը<sup>38</sup>: Այս ամենի համատեքստում լրացուցիչ արժանահավատություն են ծեռք բերում բազմաթիվ վկայություններն այն մասին, որ երիտթուրքերի ստեղծած գաղտնի «Քարաքող» կազմակերպությունն է մեծապես նպաստել, որ Մուսթաֆա Քեմալը նշանակում ստանա արևելյան վիլայեթներում:

---

of Independence War within the framework of recollections, - The Journal of Academic Social Science Studies, Volume 6, Issue 3, March 2013, s. 1237.

<sup>37</sup> Sığın, oğlunla, Akal Emel, Mustafa Kemal, İttihat Terakki ve Bolşevizm Milli Mücadelenin Başlangıcında. 2. Basım (Genişletilmiş ve Gözden Geçirilmiş). İstanbul, 2006, s. 57-60.

<sup>38</sup> Şimşek Erdal, Bahar İlhan, Türkiye'de İstihbaratçılık ve MİT. İstanbul: Kum Saati, 2004, s. 173.

Միաժամանակ, համաձայն պահպանված վկայությունների, Երիտթուրքերի կուսակցության՝ մայրաքաղաքում մնացած վերնախավի մեծ մասը, ծանոթ լինելով նրա անհատականության՝ վերը նշված բացասական կողմերին, չեր վստահում Քեմալին<sup>39</sup>: Այդ էր պատճառը, որ նրան ոչ հաջողվեց ստանալ դեկավար դիրք կենտրոնական կառավարությունում, ոչ էլ դառնալ Երիտթուրքերի առաջնորդը: Լավագույն լուծումը նրան մայրաքաղաքից հնարավորինս հեռու ուղարկելն էր, ինչն էլ հետագայում իրականացավ: Նշենք, որ նման մոտեցում ուներ Մուաթաֆա Քեմալի նկատմամբ նաև Էնվերը. նա նոյնպես նախընտրում էր տեսնել դավադիր խառնվածքով հայտնի Քեմալ փաշային մայրաքաղաքից հեռու, նույնիսկ աշխարհամարտի թեժ կողմների ժամանակ նրան ամիսներով արտասահման «բուժման» ուղարկելով:

Միանգամայն հիմնավորված է մի շարք մասնագետների կողմից առաջ քաշվող թեզն այն մասին, որ Քեմալի դեկավարած ազգայնամոլական շարժման կորիզը կազմում էին Երիտթուրքերը՝ հիմնականում Թեշքիյաթ-ը Մահսուսայի անդամները: Քեմալը նրանց մեծ տեղ էր տալիս իր դեկավարած շարժման շրջանակներում, իհարկե՛ այն դեպքում, երբ նրանք հայտարարում էին Քեմալին իրենց հավատարմության մասին:

Ուշագրավ է հետևյալ փաստը. 1919 թ. հունիսի 23-ին բացված Էրզրումի (Կարինի) համաժողովին մասնակցում էր

<sup>39</sup> Yalçın E. Semih, - Mütareke Döneminde Mustafa Kemal Paşa'nın İstanbul'daki Faaliyetleri (30 ekim 1918-16 Mayıs' 1919), - Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Tarih Bölümü Tarih Araştırmaları Dergisi, Cilt:17, Sayı: 28, 1995, s. 187.

34 Երիտթուրք, իսկ մասնակիցների ընդհանուրը թիվը 60-ն էր<sup>40</sup>:

Հետագայում, Թուրքիայի Հանրապետության ծագում-նաբանության շրջանում Քեմալը լայնորեն հենվում էր այդ «Միություն և առաջադիմություն» կուսակցության և Թեղրիլյաթ-ը Մահսուսա գաղտնի կազմակերպության անդամների վրա: Նա շարունակեց ընկերական մոտիկ կապեր պահպանել թեղրիլյաթականների՝ Հայոց ցեղասպանության համար պատասխանատվություն կրող հանցագործների հետ, ինչպիսին էին, օրինակ, Քուչչուրաշը Էշուֆը, Շութրյու Քայան և այլք: Թեղրիլյաթական էր նաև Թուրքիայի Հանրապետության 3-րդ նախագահը՝ Զելալ Բայարը, որը Քեմալի նախագահության շրջանում եղել է նաև վարչապետ:

---

<sup>40</sup> Հաշվարկը կատարված է համաձայն Ս. Դ. Քըլինչքայի կողմից մասնակիցների կուսակցական պատկանելության մասին բերված տվյալների: Նա Մուսթաֆա Քեմալին բնուրագրում է որպես երիտթուրք: *Sarı Kılıçkaya M. Derviş, Milli Mücadele'de Kongreler ve İttihatçılık Sorunu, -* <http://www.ait.hacettepe.edu.tr/akademik/arsiv/kongr.htm>.

## 2. ՄԵԿՆՈՒՄ ԱՐԵՎԵԼՔ

Հրատարակված փաստաթղթերը հնարավորություն են ընձեռում վերականգնելու Մուսթաֆա Քեմալի՝ կայսրության արևելյան վիլայեթներում տեղակայված 9-րդ բանակի տեսուչի պաշտոնում նշանակման գործընթացը։ Այն սկիզբ առավ 1919 թ. ապրիլի 30-ին, երբ ռազմական նախարարը դիմեց սուլթանին՝ առաջարկով նշանակել նրան 9-րդ բանակի տեսուչ<sup>41</sup>։ Նույն օրը սուլթանը տվեց համապատասխան հրամանը<sup>42</sup>։ Հրամանի կատարումը դրվում էր ռազմական նախարար Շաքիր փաշայի վրա։ Այդպիսի արագացված գործընթացը, որը սովորաբար ավելի երկար էր տևում, վկայում էր, որ կայսրության ղեկավարությունն ուներ Քեմալին արևելյան նահանգներ ուղարկելու խիստ շահագրգուվածություն։ Մայիսի 6-ին ռազմական նախարարը տեղեկացրեց Քեմալին ընդունված որոշման մասին և հորդորեց նրան հնարավորինս արագ մեկնել և անցնել պարտականությունների կատարմանը<sup>43</sup>։ Շաքիր

<sup>41</sup> Տես ռազմական նախարար Շաքիր փաշայի կողմից սուլթան Վահիեդ-դինին ուղարկված վերջինիս հրամանի նախագծի տեքստում [Atatürk], Atatürk İle İlgili Arşiv Belgeleri: 1911-1921 tarihleri arasına ait 106 belge. Ankara: T. C. Başbakanlık Osmanlı Arşivi Daire Başkanlığı, 1982, s. 21.

<sup>42</sup> Տես սուլթան Վահիեդ-դինի արձակած հրամանի տեքստում, որը ստորագրել էին ռազմական նախարարը և սայլազամ Դամաթ Ֆերիթ փաշան [Atatürk], Atatürk İle İlgili Arşiv Belgeleri: 1911-1921 tarihleri arasına ait 106 belge. Ankara: T.C. Başbakanlık Osmanlı Arşivi Daire Başkanlığı, 1982, s. 22.

<sup>43</sup> Տես ռազմական նախարար Շաքիր փաշայի կողմից ստորագրված համապատասխան փաստաթղթի տեքստում [Atatürk], Atatürk İle İlgili

փաշան կցել էր այդ իրամանին նախարարների խորհրդի կողմից հաստատված ցուցումները, որոնց Մուսթաֆա Քեմալը պարտավոր էր հետևել իր նոր պաշտոնավարության ժամանակ<sup>44</sup>: Նրա առջև խնդիր էր դրվել հաստատել կարգ ու կանոն իր պատասխանատվության տակ գտնվող տարածաշրջանում: Այդ փաստաթղթի վերլուծությունը ցույց է տալիս, որ Քեմալին տրվել էին շատ մեծ լիազորություններ, որոնց իրականացումը հնարավոր էր դարձնում իր ենթակայության տակ վերցնել ոչ միայն բոլոր զինված ստորաբաժանումները, որոնք մտնում էին 9-րդ բանակի կազմի մեջ, այլ նաև Տրավիզոնի, Կարինի (Էրզրումի), Սվազի (Սիվասի), Վանի վիլայեթների և Էրզինջանի ու Զանիկի առանձին լիվաների քաղաքացիական իշխանությունները: Փաստորեն, նա դառնում էր Օսմանյան կայսրության արևելյան հատվածի տերն ու տիրակալը:

Վերը նշված պաշտոնական գրագրությունը կրում է ձևական բնույթ և հնարավորություն չի տալիս հասկանալու տեղի ունեցած գործընթացների իրական շարժադրությունը: Այդպիսին էր Օսմանյան կայսրության առանձնահատկությունը: Այդ պետության պատմությունն ուսումնասիրելիս հետազոտողն անխուսափելիորեն առնչվում է դրա հետ: Հասկանալու համար իրադարձությունների իրական պատճառները, ընթացքը և նպատակները՝ անհրաժեշտ է ձեռք բերել լրացնից

---

Arşiv Belgeleri: 1911-1921 tarihleri arasında ait 106 belge. Ankara: T. C. Başbakanlık Osmanlı Arşivi Daire Başkanlığı, 1982, s. 22.

<sup>44</sup> Համապատասխան տեքստը տես: [Atatürk], Atatürk İle İlgili Arşiv Belgeleri: 1911-1921 Tarihleri Arasına Ait 106 Belge. Ankara: T. C. Başbakanlık Osmanlı Arşivi Daire Başkanlığı, 1982, s. 23-24.

տեղեկություններ, որոնք չեն արտացոլված պաշտոնական փաստաթղթերում: Այդ երևույթը հատուկ է նաև ժամանակակից Թուրքիային: Մասնագիտական գրականության մեջ այն ստացել է «խորքային պետություն» (derin devlet) անվանումը: Այդ «խորքային պետությունը» գոյություն ունի «նորմալ» պետությանը՝ իր ողջ կառուցվածքով, գուգահեռ, և նա է կանգնած կարևոր որոշումների հետևում:

Աբդուլ Համիդ Երկրորդի կառավարման տարիներին խորքային պետությունը կազմում էին նրա պալատում գործող գրասենյակները, որոնք «մասնագիտանում» էին պետական կառավարման մեկ կամ մի քանի ոլորտներում և, ըստ Էռլյան, փոխարինում էին նախարարություններին և կառավարությանն ընդհանրապես: «Խորքային պետության» այդ կառուցվածքը հնարավոր դարձրեց գաղտնիության պայմաններում նախապատրաստել Հայոց ցեղասպանության առաջին փուլ՝ 1890-ական թթ. կեսերի այսպես կոչված համիդյան ջարդերը: Այդ ծրագիրն արդյունք էր գործունեության, որն իրականացվեց մի այնպիսի գրասենյակի կողմից, որի անվանումը հնչում էր միանգամայն «անմեղ»<sup>45</sup>:

Երիտթուրքերի շրջանում կայսրությունը կառավարվում էր այդ կուսակցության Կենտրոնական կոմիտեի մի խումբ անդամների կողմից, որոնք շատ դեպքերում չէին գրադեցնում

<sup>45</sup> Տե՛ս այդ մասին. Սաֆրաստյան Ռուբեն, Օսմանյան կայսրությունում 1890 թթ. կեսերի Հայկական կոտորածների գիտական գնահատականի հարցի շուրջ, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, VII, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ. Երևան, Լուսակն, 2011, էջ 134 – 140:

որևիցե պետական պաշտոն<sup>46</sup>: Նրանց անունները գաղտնի էին պահպում: Նրանցից մի քանիսը նախապատրաստեցին Հայոց ցեղասպանության հրեշավոր ծրագիրը<sup>47</sup>: Թեղրիյաթ-ը Մահուսայի անդամները կարևոր դերակատարում ունեցան այդ ծրագրի իրականացման մեջ՝ ներգրավված լինելով զանգվածային սպանություններում:

«Զինադադարի» տարիներին, երբ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը պաշտոնապես լրեց իշխանությունը և հայտարարեց լուծարման մասին, «խորքային պետության» գործառույթներն իր վրա վերցրեց այդ կուսակցության պարագնությունների կողմից ստեղծված գաղտնի «Քարաքոլ» կազմակերպությունը՝ ներառելով Թեղրիյաթ-ը Մահուսայի բազմաթիվ անդամների և այդպիսով վերածվելով նրա շարունակությանը: Այդպիսով, խորքային պետությունը դուրս մղվեց երկրի կառավարման բարձրագույն օրակից: Մեծապես նպաստելով Մուսթաֆա Քեմալի նշանակմանը կարևոր պաշտոնի կայսրության արևելյան հատվածում՝ խորքային պետությունը նպատակ էր հետապնդում նրա միջոցով վերականգնել իր դիրքերը որպես կառավարման բարձրագույն և միաժամանակ գաղտնի մարմին: Այդ մասին ակնարկում է իր

<sup>46</sup> Տե՛ս այդ մասին. Safrastian Ruben, The Political Party and Genocide: The Committee of Union and Progress at the Threshold of the "Final Solution" - Problems of Genocide: Proceedings of the International Conference on „Problems of Genocide”, April 21-23, 1995, National Academy of Sciences, Yerevan, Republic of Armenia. - Toronto: The Zoryan Institute of Canada, 1997, p. 191-200.

<sup>47</sup> Տե՛ս այդ մասին. Սաֆրաստյան Ռուբեն, Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը, Վեմ համահայկական հանդես, 2009, թիվ 1 (26), էջ 48-62:

հուշերում *Թեղթիյաթ-ը Մահսուսայի* ղեկավարներից Հյուսամեթթափին էրթյուրքը, հայտնելով, որ Մուսթաֆա Քեմալին Արևելքում նշանակում ստանալու գործում օգնել են նաև պաշտոնապես արդեն չգործող այդ հանցավոր կազմակերպության գործակալները՝ նպատակ ունենալով նրա միջոցով այնտեղ ստեղծել խոշոր մի կազմակերպություն<sup>48</sup>:

Սակայն, ինչպես ցույց տվեց իրերի հետագա ընթացքը, այդ ծրագիրն իրականացավ միայն մասնակի: Խոշոր կազմակերպություն ստեղծվեց, սակայն այն հետզհետեւ անցավ Մուսթաֆա Քեմալի միանձնյա իշխանության ներքո: Երիտթուրք ընկերները ստիպված էին ենթարկվել նրա կամքին և սպասել նրա բարեհաճությանը:

---

<sup>48</sup> *Sktu [Erturk Hüsamettin]*, Samih Nafiz Tansu, *İki Devrin Perde Arkası*. Anlatan: Hüsamettin Ertürk, İstanbul: Çınar. 1969, s. 217.

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ՄԵԶՏԵՂԻՑ ՎԵՐԱՑՎԻ...»

### 1. ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒԽԹԱՖԱ ՔԵՄԱՀԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ

Հայ ժողովրդի, Հայկական հարցի, Հայաստանի Հանրապետության վերաբերյալ Մուսթաֆա Քեմալի արտահայտած մոտեցումներն ու գնահատականները մինչև այսօր հայրենական պատմագրության կողմից լրջորեն, հիմնվելով սկզբնադրյուրների վրա, չեն ուսումնասիրվել: Պատճառները, ըստ մեզ, երկուսն են: Առաջինը կապված է այն հանգամանքի հետ, որ խորհրդային Միությունում ստեղծվել էր Լենինի և Աթաթյուրքի բարեկամության մասին մի պաշտոնական առասպել, ինչից բխում էր, որ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի կերպարն ու գործունեությունը պետք է լուսաբանվեին խորհրդային արևելագիտության կողմից հիմնականում դրական տեսակետից: Այդ պարտադրանքը գործում էր նաև հայ թուրքագիտության ոլորտում: Այն հնարավոր չէր խախտել, կարելի էր միայն, կիրառելով տարրեր հնարքներ, շրջանցել, ինչը և փորձում էին անել խորհրդային Հայաստանի թուրքագետներն անցյալ դարի 60 - 80-ական թվականներին<sup>49</sup>: Սակայն գրաքննության պայմաններում հնարավոր չեղավ այդ խնդիրը դարձնել նպա-

<sup>49</sup> Տես, օրինակ, խորհրդահայ թուրքագիտական դպրոցի ներկայացուցիչներ Հ. Խնձրյանի, Ե. Սարգսյանի, Ռ. Սահակյանի, Զ. Կիրակոսյանի և այլոց դասական դարձած աշխատությունները:

տակային քննարկումների առարկա: Գոյություն ուներ նաև սկզբնաղբյուրների բացակայության խնդիրը, քանի որ այդ տարիներին Շուրջիայում դեռևս բացարձակ իշխում էր պաշտոնական պատմագրությունը, ինչը սահմանափակում էր Աթաթյուրքի ստորագրությունը կրող փաստաթղթերը գիտական լայն շրջանառության մեջ դնելու գործընթացը, քանի որ պաշտոնական շրջանակները մտավախություն ունեին, որ դա կարող է խաթարել տասնամյակների ընթացքում պետական քարոզչության կողմից ստեղծված Աթաթյուրքի «սրբացված» պատկերը:

Փորձելով լրացնել այդ բացը և անդրադառնալով սկզբնաղբյուրներին՝ մենք առնչվեցինք մեկ այլ դժվարության: Ինքը՝ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքը, իր հրապարակային ելույթներում ցուցաբերում էր զգուշավորություն և աշխատում էր հնարավորինս շրջանցել հայերի հետ կապված թեմաները, կամ էլ սահմանափակվում էր՝ արտաքերելով ընդհանուր բնույթի արտահայտություններ: Պաշտոնական գործության մեջ հանդիպող հայ ժողովրդի, Հայկական հարցի և Հայաստանի հիշատակումները բխում են տվյալ պահին ստեղծված ռազմական կամ քաղաքական իրադրության տրամաբանությունից և ունեն հիմնականում կոնկրետ խնդիրների լուծմանը նպատակառությամբ: Վերը նշված դժվարությունը հնարավոր եղավ հայութահարել թուրքական սկզբնաղբյուրներին ավելի ուշադիր ծանոթանալուց հետո:

Ինչպես արդեն նշել ենք վերևում, հայ ժողովրդի մասին խոսելիս Քեմալը ձգտում է խուսափել այնպիսի արտահայտությունների օգտագործումից, որոնք կարող էին առաջացնել

Եվրոպայի ու ԱՄՆ հասարակական կարծիքի կամ քաղաքական գործիչների բացասական արձագանքը: Այս տեսակետից հատկանշական է նրա հուշագիրը՝ ուղղված Օսմանյան կայսրությունում գտնվող ամերիկյան բանահավաք առաքելության դեկավար, գեներալ Հարրորդին: Անդրադառնարկվ թուրքերի դիրքորոշմանն Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների, այդ թվում՝ հայերի նկատմամբ, նա գրում է, որ այն բխում է «ամենալավ նպատակներից, և ազնիվ զգացմունքներից» և թուրքերի հետ նրանց «իհակատար իրավահավասարությունից» բացի ուրիշ ոչ մի մոտեցում գոյություն չունի<sup>50</sup>: Համեմատենք այս ծևակերպումները Մուսթաֆա Քեմալի այլ բնութագրումների հետ, որոնք հնչել են Ադանայի թուրք արիեստավորների հետ նրա հանդիպման ժամանակ մի քանի տարի անց, 1923 թ. մարտի 16-ին: Դիմելով նրանց՝ Քեմալն ասել է. «Հայերն այս հարուստ երկրում ոչ մի իրավունք չու-

<sup>50</sup> Տես փաստաթղթի տեքստում. Kuvay-i Milliye (24. IX. 1919): Anadolu ve Rumeli Müd. Huk. Cem. Kuruluş Sebepleri ve Teşkilatı-Son durum -Ermeniler-Amerikan Yardımı, G. Harbord'a Verilen Muhtıra, - [Atatürk], Atatürk'un Tamim, Telgraf ye Beyannameleri. IV (Açıklamalı Dizin İle). Ankara, 2006, s. 85. Ըստ այս համառու թարգմանությունը տես. Армения в документах Государственного департамента США 1917-1920 гг., Составитель сборника и перевод Гаянэ Махмурян, Ереван: Институт истории НАН РА, 2011, с. 336-339. Այնտեղ վերը նշված հատվածը բացակայում է: Հավանաբար, գեներալ Հարբորդը լուրջ չի ընդունել Քեմալի պնդումները քրիստոնյաների նկատմամբ թուրքերի տածած «ամենալավ նպատակների և ազնիվ զգացմունքների» մասին, համարել է դրանք ոչ կարևոր և դուրս է թռղել դրանք Վաշինգտոն ուղարկված հեռազրից:

Նեն: Երկիրը ծերն է, թուրքերինը»<sup>51</sup>: Սա այն սակավաթիվ դեպքերից է, երբ բարձրածայն հնչել է նրա իրական մոտեցումը «լիակատար իրավահավասարության» մասին:

Գեներալ Զ. Հարբորդին ուղղված՝ վերևում նշված գեկուցագրում Քեմալն անդրադառնում է նաև Հայաստանի Հանրապետության նկատմամբ ազգայնամոլների դիրքորոշմանը և ընդգծում է, թե «Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որի կենտրոնը Երևանն է, մենք ոչ մի նկատառում չունենք, որը կլիներ ոչ բարեկամական»<sup>52</sup>: Այդ հայտարարությունից մեկ տարի անց, երբ քեմալականների բանակը ներխուժել էր Հայաստան և ծանր պարտություններ հասցրել հայկական բանակին, Անկարայից հետևում է Քեմալի թելադրանքով գրված հոյժ գաղտնի հրամանը թուրքական բանակի հրամանատար Ք. Քարաքերիր փաշային՝ «մեջտեղից վերացնել Հայաստանը»<sup>53</sup>:

Մուսթաֆա Քեմալի այս երկերեսանի մոտեցումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ նա հասկանում էր, որ Առաջին աշխարհամարտի ընթացքում օսմանյան կառավա-

<sup>51</sup> Տես փաստաթղթի տեքստում. Adana Esnaflarıyla Konuşma (16. III. 1923), - [Atatürk], Atatürk'un Söylev ve Demeçleri. II (1906 – 1938). (Açıklamalı Dizin İle). 5. Baskı. [Ankara], Türk İnkılâp Tarihi Enstitüsü Yayınları, 1997, s. 130.

<sup>52</sup> Տես փաստաթղթի տեքստում. Kuvay-ı Millîye (24. IX. 1919): Anadolu ve Rumeli Müd. Huk. Cem. Kuruluş Sebepleri ve Teşkilatı-Son Durum –Ermeniler- Amerikan Yardımı, G. Harbord'a Verilen Muhtıra, - [Atatürk], Atatürk'un Tamim, Telgraf ve Beyannameleri. IV (Açıklamalı Dizin İle). Ankara, 2006, s. 89.

<sup>53</sup> Տես հեռագրի տեքստում. Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 901. Այն թարգմանաբար գետեղված է սույն աշխատության «Թուրքական փաստաթղթեր» բաժնում:

րության իրականացրած հայ ժողովրդի զանգվածային ոչնչացման մասին հիշողությունները դեռ թարմ էին արևամտյան երկրներում, ինչն առաջացնում է խիստ հակաթուրքական տրամադրություններ: Ուշագրավ է, որ այդ մասին նշված է նոյնիսկ Հայաստանի նկատմամբ պատերազմ սկսելու սկզբունքային անհրաժեշտության վերաբերյալ Նախարարների խորհրդի որոշման մեջ<sup>54</sup>: Այստեղ կարդում ենք. «Ողջ քրիստոնյա աշխարհը մեր դեմ տրամադրված լինելու ամենակարևոր պատճառներից են հայկական իրադարձությունները<sup>55</sup>»: Փաստաթուղթը ստորագրված է Մուսթաֆա Քեմալի կողմից:

Նշենք, որ հնարավոր եղավ ծանոթանալ պաշտոնական գրագրության մաս կազմող մի քանի տասնյակ փաստաթյանի, որոնք կրում են Մուսթաֆա Քեմալի ստորագրությունը և որոնք առնչվում են հայ ժողովրդին: Նրանց մի մասը հույժ գաղտնի է: Իր մի շարք ելույթներում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի բաց ու դրսփակ նիստերում Քեմալը նոյնպես արծարծել է հայ ժողովրդի հետ առնչություն ունեցող հարցեր: Այդ փաստաթյանի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու Մուսթաֆա Քեմալի մոտեցումները մեր ժողովրդի համար մի շարք կարևոր խնդիրների նկատմամբ:

<sup>54</sup> Տերսուր տես. Genel Siyasi Durum ve Bolşeviklerle İttifak İçin Aradaki Ermenistan Engelinin Kaldırılmasına Dair Vekiller Heyeti Müzakeresi (6. V. 1920), 15. K. Kumandanlığına Gönderilen Şifre, Ankara: 6/5/36. Zata Mahsus ve Aceledir, - [Atatürk], Atatürk'un Tamim, Telgraf ve Beyannameleri. IV. Ankara: TTK Basimevi, 1991, s. 333.

<sup>55</sup> Հայոց ցեղասպանությունը Քեմալն անվանում է «հայկական իրադարձություններ» (Ermeni vukucat): Նրա մոտեցմանն այդ հանցագործության նկատմամբ անդրադառնում ենք սուս աշխատության հաջորդ էջերում:

Դրանցից առաջինը, անտարակույս, նրա քնովթագրումներն են, որոնք կապված են Հայոց ցեղասպանության հետ: Նախքան այդ խնդրի քննությանն անցնելը, իմաստ ունի պատասխանել հետևյալ հարցին. արդյո՞ք նա պատասխանատվություն է կրում Հայոց ցեղասպանության համար:

Պատմագրության մեջ, ինչպես թուրքական, այնպես էլ արևային, ընդունված է համարել, որ Մուաթաֆա Քեմալը, ի տարբերություն շատ և շատ երիտթուրք սպաների, այդ թվում իր մոտ ընկերների, մասնակցություն չի ունեցել այդ ծանրագոյն հանցագործությանը և պատասխանատվություն չի կրում դրա համար: Այս պնդումը համապատասխանում է իրականությանը միայն մասնակի՝ 1915 թվականի իրադարձությունների տեսակետից, սակայն այդ նույն հստակությունը դժվար է հիմնավորել 1916 թ. վերաբերյալ, եթե նա Արևմտյան Հայաստանում տեղակայված օսմանյան բանակի 16-րդ կորպուսի հրամանատարն էր:

Մինչև այսօր Մուաթաֆա Քեմալի գործունեության այդ է ջը լուրջ քննության առարկա չի եղել: Խնդիրը կարիք ունի անաշառ հետազոտության՝ մասնավորապես հենվելով հայկական աղբյուրների, հիմնականում Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության մնացորդների ներկայացուցիչների վկայությունների վրա, քանի որ թուրքական պատմագրությունն այս թեման շրջանցում է:

Մինչդեռ, նա սկսել է այստեղ պաշտոնավարել 1916 թ. մարտի 27-ից և մի քանի օր հետո ստացել է գեներալի իր առաջին կոչումը՝ ապրիլի 1-ին նա արժանացել է միրիվայի

(բրիգադի գեներալի) կոչման<sup>56</sup>: Նա Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվել է շուրջ մեկ տարի՝ հիմնականում գործողություններ ծավալելով Բիթլիսի, Մուշի, Սիլվանի շրջաններում: Այդ ընթացքում նա, իր սովորության համաձայն, վարել է օրագիր, սակայն ոչ մի հիշատակում հայ ժողովրդի դաժան բնաջնջման մասին չի թողել: Փոխարենը, օրագրում կան հիշատակումներ հայկական զինված ջոկատների կողմից թուրք խաղաղ ազգարնակչության նկատմամբ իրականացված «դաժանությունների» մասին<sup>57</sup>: Անտարակոյս, լինելով գործող բանակի բարձրաստիճան սպա՝ Քեմալը լավ տեղեկացված էր իր զորքերի կողմից ռազմական գործողություններ վարող տարածքում տեղի ունեցող իրադարձություններից, այդ թվում հայերի «տեղահանությունից»: Սակայն գերադասում էր դրա մասին իր օրագրում չիշատակել, ինչը կասկածներ է առաջացնում, որ ինքը նույնպես մասնակցել է հայ ժողովրդի դեմ իրականացված այդ հրեշավոր հանցագործությանը: Երբ շուրջ մեկ տարի անց՝ 1917 թ. դեկտեմբերին, Քեմալը գտնվում էր Գերմանիայում, պատասխանելով գերմանացի պաշտոնյաներից մեկի հարցին հայերի նկատմամբ թուրքերի վատ վերաբերմունքի պատճառների մասին՝ նա ձևացրեց, որ զարմա-

<sup>56</sup> Kardaş Abdulaziz, Birinci Dünya Savaşı Dönemi'nde Mustafa Kemal Paşa'nın Bitlis'teki Faaliyetleri, - Turkish Studies: International Periodical For The Languages, Literature and History of Turkish or Turkic, Volume 10/5, Spring 2015, s. 234.

<sup>57</sup> Տես, օրինակ, 1916 թ. նոյեմբերի 16-ի գրառումը. [Atatürk], Gazi Mustafa Kemal Atatürk'ten Bize: Söylevleri, Konuşmaları, Söyleşileri, Anıları, İlgeleri, Yazışmaları (1903 -1938). Cilt I (1903 - 22/4/1920). Türkçeştiiren: M. Sunullah Arisoy. İstanbul: Hürriyet Vakfı Yayınları, 1987, s.178.

ցած ու վրդովված է այդ հարցից և հրաժարվեց նրան պատասխանել<sup>58</sup>: Այս միջադեպը մեկ անգամ ևս փաստում է հայ ժողովրդի հետ կապված հարցերում Քեմային հատուկ երկերեսանիությունը:

Միաժամանակ, թուրքական պաշտոնական փաստաթղթերը փաստում են, որ Մուսթաֆա Քեմալը լավ սերտել էր Թալեաթի և Էնվերի՝ հայ ժողովրդի դեմ ուղղված քաղաքականության գործելակերպը: 1920 թ. սեպտեմբերի 15-ին, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության վրա հարձակման նախօրեին, ԹԱԱԺ նախագահ Մուսթաֆա Քեմալի ղեկավարությամբ տեղի ունեցած կառավարության նիստում որոշում է ընդունվում քեմալականների հսկողության տակ գտնվող որոշ շրջաններում սկսել 20 - 40 տարեկան հայ և հոյն տղամարդկանց բռնի տեղահանությունը<sup>59</sup>: Ուշագրավ է հիմնավորումը. «Ենելով որոշ քաղաքական ու ռազմական պատճառներից ու գնահատականներից»<sup>60</sup>: Ուշագրավ է, որ կառավարությունը խուսափում է նշել տեղահանության իրական պատճառը: Ակնհայտ է, որ այն կապված է հոյժ գաղտնիության պայմաննե-

<sup>58</sup> [Atatürk], Atatürk'ün Anıları, Yayına Hazırlayan: İsmet Görgülü, 2 Basım, İstanbul: Bilgi Yayınevi, 1998, s. 90-91.

<sup>59</sup> Տես կառավարության որոշման տեքստում. Heyeti Vekile Kararı: Belli lıvalar Dahilinde Bulunan Rum ve Ermenilerden 20-40 Yaşında Bulunan Erkeklerin Dahilinde Belirli Mevkilere Muhafaza Altında sevki (15 Eylül), - [Atatürk], Atatürk'ün Bütün Eserleri, Cilt: 9 (1920), İstanbul: Kaynak Yayınları, 2002, s. 341. Այդ փաստաթուղթն այլ ժողովածուներում տեղ չի գտել:

<sup>60</sup> Heyeti Vekile Kararı: Belli lıvalar Dahilinde Bulunan Rum ve Ermenilerden 20-40 Yaşında Bulunan Erkeklerin Dahilinde Belirli Mevkilere Muhafaza Altında Sevki (15 Eylül), - [Atatürk], Atatürk'ün Bütün Eserleri, Cilt: 9 (1920), İstanbul: Kaynak Yayınları, 2002, s. 341.

րում նախապատրաստվող պատերազմով Հայաստանի դեմ: Մեզ դեռևս չի հաջողվել հայտնաբերել վստահելի փաստեր, որոնք կվկայեին, թե Քեմալի այդ ծրագիրն իրապես կյանքի է կոչվել:

Նույնիսկ եթե այդ «տեղահանությունը» չի իրականացել, աշխարհն արդեն ականատես էր եղել հայ ժողովրդի դեմ ուղղված ցեղասպանության քաղաքականության հերթական դրսնորումներին, այս անգամ արդեն քեմալականների և նրանց առաջնորդի «հեղինակությամբ»: Օրինակ, Մեծ Բրիտանիան ու ԱՄ-ը խստագոյնս դատապարտել էին քեմալականների կողմից Հայոց Կիլիկիայում սկսված դաժան ջարդերի կազմակերպիչներին, որոնց զոհ էր գնացել, ըստ անգլիացիներից ստացված տեղեկատվության, շուրջ յոթ հազար խաղաղ բնակիչ<sup>61</sup>:

Հայոց ցեղասպանության հետ կապված մյուս կարևոր խնդիրն այդ հանցագործության գնահատումն է: Մուսթաֆա Քեմալի կողմից: Անդրադառնալով այդ խնդրին՝ պարզ է դառնում, որ նրա մոտեցումը ենթարկվել է կարևոր փոփոխությունների ժամանակի ընթացքում:

Այսպես, դեկավարելով ազգայնամոլական շարժումը, որը դեռևս թույլ էր, իսկ ճնշումն Անտանտի երկրների կողմից՝ ուժեղ, Անտատի երկրների ներկայացուցիչների հետ հանդիպումների ընթացքում Քեմալը փորձում էր հնարավորինս խուսափողական գնահատականներ տալ: Մասնավորապես, այդ-

<sup>61</sup> Տես այդ մասին, օրինակ, Երիտասարդ թուրք հետազոտող Այշենուր Քորրմազի հոդվածը. Korkmaz Ayşenur, Mustafa Kemal'in 1915-16 Ermeni Olaylarına Yaklaşımı: Fazahat, - Toplumsal Tarih, 239, Kasım 2013, s. 24-25.

պես է նա վարվել՝ պատասխանելով գենարալ Հարվորդի ուղղակի հարցին: Նա հպանցիկ նշում է երիտթուրքերի «վատ կառավարումը» և ամեն կերպ փորձում է վերջինիս մոտ ստեղծել տպավորություն, որ իր գիսավորած շարժումը ոչ մի առնչություն չունի երիտթուրքերի հետ<sup>62</sup>:

Այդ շրջանում նա ընդգծում էր, որ, ինչպես հայտարարեց 1920 թ. ապրիլի 24-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի փակ նիստի ժամանակ, «հայերը գտնվում են մի այնպիսի վիճակում, որ նրանք վայելում են ամբողջ աշխարհի բացարձակ օժանդակությունը»<sup>63</sup>: Այս վախն էր, ինչպես ինքն է նշում «ամբողջ աշխարհից», որ ստիպում էր նրան ժամանակ առ ժամանակ այնպիսի հայտարարություններ անել, որոնք հնարավորություն կտային իրեն հեռու պահելու երիտթուրք հանգագործներից, չնայած այն հանգամանքին, որ ինքը՝ Մուսաֆա Քեմալը, ինչպես նշել ենք վերևում, ոչ միայն անդամակցում էր երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցությանն ու նրա գաղտնի Թեղթիյաթ-ը Մահուսակազմակերպությանը, այլ նաև ստացել էր 9-րդ բանակի տեսուչի պաշտոնը հենց երիտթուրք ընկերների ջանքերի շնորհիվ:

Վերը նշված համատեքստում անդրադառնանք Հայոց ցեղասպանության վերաբերյալ Մուսաֆա Քեմալի՝ վերջին

<sup>62</sup> Kuvay-ı Milliye (24. IX. 1919): Anadolu ve Rumeli Müd. Huk. Cem. Kuruluş Sebepleri ve Teşkilâti-Son Durum -Ermeniler- Amerikan Yardımı, G. Harbord'a Verilen Muhtıra, - [Atatürk], Atatürk'un Tamim, Telgraf ye Beyannameleri. IV (Açıklamalı Dizin İle). Ankara, 2006, s. 89.

<sup>63</sup> TBMM Gizli Celse Zabıtları. Cilt: 1, 24 Nisan 1336 (1920) – 21 Şubat 1337 (1921). Ankara: Türkiye İş Bankası Kültür Yayınları, 1985, s.4.

տարիներին մասնագետների մեծ հետաքրքրությունն առաջացրած բնութագրմանը: Խոսքը նրա օգտագործած «fazahat» արտահայտության մասին է: Այն հայերեն կարելի է թարգմանել «ամոթալի արարք» կամ «խայտառակություն»:

Մի շարք հետազոտողներ, մասնավորապես՝ հայտնի պատմաբան Վահագն Տատրյանը, գրում են, որ Քեմալն այն օգտագործվել է 1920 թ. ապրիլի 24-ին ԹԱԱՄ Նիստի իր ելույթում<sup>64</sup>, իսկ Թաներ Արձամը, նոյնիսկ, այդ բառն օգտագործել է Հայոց ցեղասպանությանը նվիրված իր հերթական գրքերից մեկի վերնագրում՝ մեջբերելով այն Մուսթաֆա Քեմալի վերը նշված ելույթից և անգիտեն թարգմանելով «Shameful Act»<sup>65</sup>: Նրանց տեսակետը կիսում են նաև Թուրքիայի պատմության մի շարք այլ մասնագետներ, օրինակ, Այշենուր Քորքմազը<sup>66</sup> և Թաներ Թիմուրը<sup>67</sup>:

Քեմալի կողմից Հայոց ցեղասպանության դատապարտման և «fazahat» բառի օգտագործման հակառակորդներից նշենք Հայկական հարցի և հայ ժողովրդի մասին նրա պաշտոնական տեսակետը պաշտպանող հոդվածներով հայտնի

<sup>64</sup> Dadrian Vahakn N., İstanbul Divan-ı Harb-i Örfisi'nde Ermeni Soykırımı Konusunda Görülen Davalar ve Kararlar, - Tehcir ve Taktıl : Divan-ı Harb-i Örfi zabıtaları: İttihad ve Terakki'nin Yargılanması, 1919-1922, Derleyenler: Vahakn N. Dadrian, Taner Akçam. İstanbul: İstanbul Bilgi Üniversitesi, 2008, s. 11.

<sup>65</sup> Akçam Taner, A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, New York: Metropolitan Books, 2006.

<sup>66</sup> Korkmaz Ayşenur, Mustafa Kemal'in 1915-16 Ermeni Olaylarına Yaklaşımı: Fazahat, - Toplumsal Tarih, 239, Kasım 2013, s. 22-29.

<sup>67</sup> Տես այդ մասին. T24, 31 Ekim 2013, - <https://t24.com.tr/haber/prof-timur-ataturk-1915-icin-alcaklik-demisti,243031>.

պատմաբան Շ. Քանտարջյան<sup>68</sup> և... նովսիսկ Թուրքիայի արտաքին գործերի նախարարությանը<sup>69</sup>:

Այդ վեճը կարելի է համարել ավարտված, քանի որ Աթաթյուրքի երկերի լիակատար ժողովածուի 8-րդ հատորում հրատարակված է ԹԱՄԺ 1920 թ. ապրիլի 24-ի բաց նիստի ժամանակ նրա արտասանած հերթական երկարաշունչ ճառի տեքստը, որտեղ «fazahat» բառն օգտագործված է<sup>70</sup>:

Սակայն հետագայում, երբ ուժեղացան նրա գիսավորած շարժման դիրքերը և բոլշևիկյան Ռուսաստանի հետ դաշնակցային հարաբերությունների շնորհիվ հաջողվեց թեթևացնել արևմտյան երկրների ճնշումը, հասնել հայթանակի Հայաստանի Հանրապետության դեմ, նրա գնահատականները կտրուկ փոխվեցին: Նա առաջ քաշեց այն թեզը, որ հայ ժողովուրդը, անշնորհակալ գտնվելով, ապստամբություն է կազմակերպել օսմանյան իշխանության դեմ և դարձել գործիք ուսւների ծեռքին, ինչին ի պատասխան՝ օսմանյան կառավարությունը ստիպված է եղել տեղահանել հայ ազգաբնակչությանը սահմանամերձ շրջաններից դեպի երկրի խորքերը: Այսպես,

<sup>68</sup> Kantacı Şenol, Ermenilerce Atatürk'e Atfedilen Sözler ve Divan-ı Harbi-Örfi İle Ermeni Terörİstleri Tarafından Şehit Edilenlere Atatürk'ün Gösterdiği ilgi, - Ermeni Araştırmaları Dergisi, Sayı 4, Aralık 2001 - Ocak-Şubat 2002.

<sup>69</sup> Տես Թուրքիայի UÇ նախարարության կայրում տեղադրված Թ. Արշամի վերոնշյալ գրքի գրախոսականը. A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility, by Taner Akçam. New York: Metropolitan Books/Henry Holt & Company, 2006. x + 376 pages. Notes to p.464. Index to p.483. \$ 30.00 (hardback). ISBN 0-8050-7932-7, - www.mfa.gov.tr-/data/DISPOLITIKA/2016/16\_-yucel-guclu\_-a-shameful-act.pdf.

<sup>70</sup> Տես. [Atatürk], Atatürk'ün Bütün Eserleri, Cilt: 8 (1920), İstanbul: Kaynak Yayıncılıarı, 2002, s. 64.

օրինակ, 1921 թ. փետրվարի 26-ին, պատասխանելով ամերիկացի լրագրող Քլարենս Կ. Սթրայթի հարցին, թե որն է նրա դեկավարած կառավարության պաշտոնական տեսակետը Հայոց ցեղասպանության վերաբերյալ, նա հայտարարել է, որ 1915 թ. Օսմանյան կայսրության հայերը ոռուների դեմ կովող բանակի թիկունքում ապստամբություն են բարձրացրել և սկսել են հարձակվել թուրք խաղաղ բնակչության և ռազմական օրյեկտների վրա: Ստեղծված իրադրությունում կառավարությունը ստիպված էր կազմակերպել հայերի տեղահանությունը<sup>71</sup>:

Այս թեզը մինչև այսօր հիմնականն է թուրքական պաշտոնական պատմագրության և իշխանությունների կողմից վարվող Հայոց ցեղասպանության մասին իրականությունը քողարկելու քաղաքականության մեջ: Մուսթաֆա Քեմալը ոչ միայն հանդես էր գալիս նմանատիպ իրապարակային հայտարարություններով, այլ նաև իրականացնում էր քայլեր, որոնք նպատակ ունեին ապահովել երիտրուլք հանցագործների անվտանգությունը և օգնել նրանց խուսափելու պատճից: Այսպես, օրինակ, 1920 թ. օգոստոսին ԹԱՄԺ-ը նրա նախագահությամբ լուծարեց Հայոց ցեղասպանության պատասխանառուների գործերը քննող ռազմական դատարանները<sup>72</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, Քեմալը լայնորեն օգտագործում էր հայ ժողովրդի դեմ գործված ոճի մեծագույն հանցա-

<sup>71</sup> [Atatürk], Atatürk'ün Bütün Eserleri, Cilt: 11 (1921), İstanbul: Kaynak Yayınları, 2003, s. 61-62.

<sup>72</sup> Aydin Nurhan, Milli Mücadele Döneminde I. TBMM'nin Ermeni Tehcirine Bakışı, - Karadeniz, 2014 Sonbahar, Yıl 6, Sayı 25, s. 30-31.

գործներին Թուրքիայի Հանրապետության հիմնադրման գործում: Հարց է առաջանում՝ արդյո՞ք այդ հանցագործներին պետական բարձր պաշտոններով օժտելն արվում էր՝ ելնելով երիտթուրքերի կառավարման շրջանում նրանց ձեռք բնրած «փորձից», թե՝ մաս էր կազմում Քեմալի հեղինակած մի ծրագրի, որի իմաստը հետևյալն էր. այդ հանցագործները, որոնք ոչ միայն փրկվել էին արդարացի դատաստանից, այլ նաև Մուսթաֆա Քեմալի կողմից նշանակվել էին բարձրագույն պաշտոնների, այդպիսով ամեն ինչով պարտական էին լինելու Թուրքիայի Հանրապետության հիմնադիր և բռնակալ Մուսթաֆա Քեմալին:

Կարծում ենք, որ վերջինս, մեծ փորձառություն ունենալով տարբեր ինտրիգաներում և դավադրություններում, այդ քայլին գնացել էր միանգամայն գիտակցաբար, հույս ունենալով, որ բարձր պաշտոններ ստացած երիտթուրք հանցագործները կպահպանեն անձնական հավատարմությունն իր նկատմամբ: Սակայն, ինչպես ցույց տվեցին 1926 թ. իրադարձությունները, այդ հանցագործներից մի քանիսը մասնակցեցին և ղեկավարեցին Քեմալի դեմ ուղղված դավադրությունը<sup>73</sup>:

Հաջորդ խնդիրը, որին անդրադառնալը կարևոր է՝ ավելի խորը հասկանալու համար Մուսթաֆա Քեմալի իրական դիրքորոշումը հայ ժողովորդի նկատմամբ, հետևյալն է. ինչպես էր նա պատկերացնում հայերի գոյությունն իր ղեկավա-

<sup>73</sup> Տես այդ մասին երիտասարդ հետազոտող Մ. Անումյանի հետաքրքիր ուսումնասիրությունը. Անումյան Մելինե, Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919 – 1921 թթ. և 1926 թ.). Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013, էջ 117-157:

րած Թուրքիայում: Ակնհայտ է, որ նա դեմ էր հայ ժողովրդին ինքնավարության իրավունք շնորհելուն և խստորեն քննադատում էր Դամաթ Ֆերիդ փաշայի ղեկավարած կառավարության մոտեցումը, որը գտնում էր, որ հայերին կարելի է տրամադրել ինքնավարություն: Իր այդ մոտեցումը նա ձևակերպեց արդեն 1919 թ. հունիսի 3-ին, այսինքն՝ Փոքր Ասիայում գտնվելու հենց առաջին օրերին, և հոյժ գաղտնի ծածկագրով ուղարկեց տարածաշրջանում տեղակայված բանակային ստորաբաժանումների հրամանատարներին և քաղաքացիական կառավարման մարմինների ղեկավարներին<sup>74</sup>:

Քեմալը հայերին բնութագրում էր որպես ամբարտավան ժողովուրդ, որն օգտագործում է դրսի ուժերին թուրք իշխանությունների դեմ, և որին պետք է ցուց տալ իր տեղը<sup>75</sup>:

Մուաթաֆա Քեմալը կատաղի պայքարում էր, որ Արևմտյան Հայաստանում չստեղծվի հայկական պետականություն: Նա դա համարում էր Անտանտի երկրների «նվերը»<sup>76</sup> հայ ժողովրդին:

Քեմալը հավատացած էր, որ հայերն ընդհանրապես «ի վիճակի չեն ունենալու անկախ կառավարությամբ պետութ-

<sup>74</sup> [Atatürk] Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: I. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 58.

<sup>75</sup> [Atatürk], Atatürk'un Söylev ve Demeçleri. I: Türkiye Büyük Millet Meclisinde ve C. H. P Kurultaylarında (1919 – 1938). (Açıklamalı Dizin İle). 5. Baskı. [Ankara], 2006, s. 101.

<sup>76</sup> [Atatürk] Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: I. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 125.

յուն»<sup>77</sup>: Ամենակարևոր խնդիրը, որի լուծումը նա համարում էր իր ղեկավարած շարժման հիմնական նպատակներից մեկը, Հայաստանի Հանրապետությանը պարտության մատնելն էր:

1920 թ. սեպտեմբերի 20-ին կառավարության անոնսից հրաման տայլով Հայաստանի սահմանին կանգնած թուրքական բանակի հրամանատար Քյազըմ Քարաքերիր փաշային՝ անցնել սահմանը և պատերազմ սկսել Հայաստանի Հանրապետության դեմ, Քեմալն ընդգծեց, որ այդ պատերազմի նպատակն է լինելու Հայաստանի Հանրապետության գինված ուժերի ոչնչացումը<sup>78</sup>: Ավելի ուշ, երբ ակնհայտ դարձավ, որ Հայաստանի Հանրապետությունն այլս գրկվել է Քարաքերիրի բանակին որոշիչ դիմադրություն ցույց տալու հնարավորությունից, վերջինիս առջև դրվեց մի նոր խնդիր. Վերացնել «Հայաստանն իրապես և քաղաքականապես»<sup>79</sup>: Այսպիսով, պարզ դարձավ Մուսթաֆա Քեմալի վերջնական նպատակը՝ վերջ տալ Հայաստանի Հանրապետության գոյությանը:

Քեմալը, ըստ Էռլիթյան, հասավ իր նպատակին. անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց, և նրա «խորհրդայնացված» հատվածը մաս կազմեց Խորհրդային Միության: Դրանից հետո նա

<sup>77</sup> [Atatürk], Atatürk'un Tamim, Telgraf ve Beyannameleri. IV. Ankara: TTK Basımevi, 1991, s. 97.

<sup>78</sup> Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 146.

<sup>79</sup> Տես սույն գրքի «Թուրքական փաստաթղթեր» բաժինը:

ԹԱԱՄԺ ամբիոնից հայտարարեց. Հայկական հարցը «ամենաարդարացի» ձևով լուծված է<sup>80</sup>:

Եզրակացնենք: Հայկական հարցի արդարացի լուծումը, ըստ Մուսթաֆա Քեմալի, հետևյալն էր. հայ ժողովրդի բնօրրանի մի հատվածի՝ Արևմտյան Հայաստանի հայարափումը, նրա բռնակցումը Թուրքիայի Հանրապետությանը, հայ ժողովրդի բնօրրանի մեկ այլ հատվածում առաջացած Հայաստանի Հանրապետության՝ որպես անկախ և ինքնիշխան պետության, «մեջտեղից վերացումը» և տարածքային տեսակետից խիստ աղճատված տեսքով «խորհրդայնացումը» և, ըստ Էռլիթյան, վերացումը որպես անկախ պետություն: Այդպիսով, Քեմալը հավատարիմ մնաց իր երիտթուրքական անցյալին՝ շարունակելով նրանց գործը և իր պատկերացմամբ՝ հասցնելով այն ավարտին:

Երբ Մուսթաֆա Քեմալը հանդես էր գալիս վերը նշված հայտարարությամբ, թվում էր, թե նա հասել է իր նպատակին: Սակայն այսօր արդեն գոյություն ունեն երկու անկախ հայկական պետություններ՝ Հայաստանի և Արցախի հանրապետությունները, և հայ ժողովրդինը իրավացիորեն պահանջում է Հայոց ցեղասպանության հետևանքների վերացում և պատմական արդարության վերականգնում:

---

<sup>80</sup> Տե՛ս ԹԱԱՄԺ պաշտոնական արձանագրություններում. Türkiye Büyük Millet Meclisi: I. DÖNEM, 3. Yasama Yılı Açış Konuşmaları, 1 Mart 1922, - Millet Meclisi Tutanak Dergisi D. 1, C. 18, Sa. 2, - [https://www.tbmm.gov.tr/tarihce/ataturk\\_konusma/1d3yy.htm](https://www.tbmm.gov.tr/tarihce/ataturk_konusma/1d3yy.htm)

## 2. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Պատերազմը Հայաստանի առաջին Հանրապետության դեմ, ըստ Էռլիքյան, նախանշված էր քեմալականների՝ Կարինի (Էրգրումի) և Սվազի (Սիվասի) համաժողովների որոշումներով: Մենք այդ որոշումներին հատուկ չենք անդրադառնում, քանի որ դրանք բազմիցս քննարկվել են հայրենական պատմագրության մեջ: Մեր նպատակն է թուրքական սկզբնադրյուրների վերլուծության հիման վրա վերհանել պատերազմի «գաղափարական» հիմնավորման խնդիրները, ինչպես նաև վերլուծել այն սկսելու մասին որոշում ընդունելու և իրականացնելու փուլերը և բացահայտել դրանում Մուսթաֆա Քեմալի դերը: Այդպիսի խնդիր հայրենական պատմագիտությունը ցայսօր իր առջև չի դրել:

Վերը նշված տեսակետից կարևոր է ծանոթանալ «Ազգային ուսուցում» (Misak-i Millî) անվանումը ստացած փաստաթղթի ստեղծման պատմությանը և բովանդակությանը, քանի որ այն, ըստ Էռլիքյան, դարձավ այն «գաղափարախոսական» հենքը, որն անհրաժեշտ էր Հայաստանի վրա հարձակումը «հիմնավորելու» համար: Դրա նախաձեռնողն ու հեղինակը Մուսթաֆա Քեմալն էր: Ժամանակակից Թուրքիայում այն բնութագրովում է որպես քեմալական շարժման բուն նպատակներն արտահայտող ծրագիր<sup>81</sup>:

---

<sup>81</sup> Sakin Serdar, Millî Mücadelenin Programı: Misâk-ı Millî, - Atatürk Haftası Armağanı: Genelkurmay ATASE ve Denetleme Başkanlığı Yayınları, 10 Kasım, 2005, Sayı: 32, s. 31-48.

Ուշագրավ է այդ փաստաթղթի ընդունման նախապատմությունը: Քեմալի մոտիկ ընկեր և զինակից Ալի Ֆուադը (հետագայում ընդունեց Ձերեսոյ ազգանունը) պնդում է, որ դեռևս 1907 թ. նա գծել և ցույց էր տվել իրեն Օսմանյան կայսրության կազմում գտնվող բուն Թուրքիայի մի քարտեզ, որը հետագայում համարյա նույնությամբ հիմք ծառայեց «Ազգային ուխտի» նախանշված սահմանների համար<sup>82</sup>: Ալի Ֆուադի վկայությունից ակնհայտ է դառնում, որ Մուսթաֆա Քեմալն արդեն 1907 թ., երբ դեռ տեղի չէր ունեցել Հայոց ցեղասպանությունը և հայ ժողովրդի բնօրրանի մի զգալի հատվածը կազմող Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչությունը չէր ոչնչացվել, դիտարկում էր այն որպես բուն թուրքական տարածք: Այստեղից հետևում է եզրակացություն. Մուսթաֆա Քեմալի հեռուն գնացող ծրագրերում հայ ժողովրդի գոյությունն իր Հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, բացառվում էր, և երիտթուրքական կառավարության իրագործած ցեղասպանությունը միայն նպաստում էր այդ ծրագրերի իրականացմանը:

Քեմալի այս վաղեմի գաղափարներն ընդգծում էին միատարր թուրքական պետության ստեղծման անհրաժեշտությունը, որտեղ կոտորածներից և ցեղասպանությունից իրաշքով փրկված քրիստոնյա ժողովուրդների մնացորդները զրկված կլինեին իրենց ինքնությունը պահպանելու իրավունքից: Հայոց ցեղասպանության արդյունքներից «օգտվելու» միտումն ակնհայտ է:

<sup>82</sup> Stein այդ մասին. Sakin Serdar, Misâk-ı Millî'nin Hazırlanışı ve İlâniyla İlgili Görüşler, - Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, S.: 13, Y.: 2002, s. 316-317:

Զարգացնելով իր մոտեցումները՝ Քեմալը 1919 թ. դեկտեմբերի 28-ին Անկարայում հանդես եկավ Երկարաշունչ ճառով և դիմելով այդ քաղաքի երևելիներին՝ նշեց, որ Երկրի սահմանների մեջ պետք է ընդգրկել Օսմանյան կայսրության այն տարածքները, որոնք գտնվում էին օսմանյան բանակի հսկողության տակ 1918 թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ, այսինքն՝ Մուտքոսի զինադադարի ստորագրման օրը<sup>83</sup>: Ըստ ամենայնի, նա արդեն ուներ ապագա «Ազգային ուժստի» մասին իր պատկերացումը:

1920 թ. հունվարի 3-ից Քեմալը սկսեց Անկարայի իր կենտրոնատեղիում հանդիպել Կոստանդնուպոլիս մեկնող՝ օսմանյան վերջին խորհրդարան ընտրված պատգամավորների հետ և, մանրամասն ծանոթացնելով «Ազգային ուժստի» արդեն իսկ իր նախապատրաստած տեքստի հիմնական դրույթներին, պահանջել, որ նրանք խորհրդարանում ներկայացնեն այդ փաստաթուղթը և հասնեն դրա ընդունմանը<sup>84</sup>:

Քեմալի կողմից առաջադրանք ստացած պատգամավորներն այդպես էլ վարվեցին: Նրանք սկզբում նախաձեռնեցին ոչ պաշտոնական քննարկումներ, հետագայում ստեղծեցին նոյնպես ոչ պաշտոնական հանձնաժողով, որը մշակեց փաստաթուղթի վերջնական տեքստը: Այն ընթերցվեց խորհրդարանի ոչ պաշտոնական փակ նիստում հունվարի 28-ին և ընդունվեց, սակայն պահվեց գաղտնի: Առաջին անգամ այդ

<sup>83</sup> See [Atatürk], Atatürk'ün Bütün Eserleri, Cilt: 6 (1919-1920), İstanbul: Kaynak Yayınları, 2001, s. 30.

<sup>84</sup> See այդ մասին. Sakin Serdar, Misâk-ı Millî'nin Hazırlanışı ve İllâniyla İlgili Görüşler, - Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, S.: 13, Y.: 2002, s. 319:

փաստաթղթի գոյության մասին հանրությունն իմացավ փետրվարի 3-ին, երբ Կոստանդնուպոլսում հրատարակվող «Ենի գյուն» լրագիրը հանդես եկավ համապատասխան հրապարակումով՝ նշելով, որ այն ծրագիր է, որի շուրջ համախմբվել են տարբեր հայացքների տեր պատգամավորներ: Միայն փետրվարի 17-ին օսմանյան խորհրդարանը պաշտոնապես ընդունեց և հրապարակեց «Ազգային ուժստը»<sup>85</sup>:

«Ազգային ուժստը» բաղկացած էր նախարանից և 6 կետից<sup>86</sup>: Առաջին կետը նշում էր, որ «Օսմանյան կայսրության այն տարածքների ճակատագիրը, որոնք բնակեցված են բացառապես արաբական մեծամասնությամբ և որոնք 1918 թ. հոկտեմբերի 30-ի գինադադարի կնքման պահին գրավված են եղել թշնամական բանակների կողմից, պետք է որոշել տեղական ազգաբնակչության ազատ արտահայտված կամքի համաձայն», այսինքն՝ ճանաչվում էր օսմանյան տիրապետության ներքո հարյուրամյակներ գտնված արաբների ինքնորոշման իրավունքը: Արաք ժողովրդի նկատմամբ քեմալականների՝ արտաքրուստ «բարի» կամքն արտահայտող այս դրույթի հիմքում ընկած էր մի շատ պարզ իրողություն. արաբները պատերազմի տարիներին բարձրացրել էին գինված ապստամբություն, հաղթել էին, արդեն դուրս էին եկել թուրքերի իշխանությունից և գտնվում էին հայթական բրիտանական

<sup>85</sup> Sakin Serdar, İlân Ediliş Sürecinde Misâkîmillî ve Mustafa Kemal Atatürk, - Askeri Tarih Araştırmalı Dergisi, Yıl: 2, Şubat 2004, Sayı: 3, s. 77- 78.

<sup>86</sup> Şehsuvar տես. Millî Egemenlik Belgeleri: Havza Genelgesi, Amasya Tamimi, Erzurum Kongresi Beyannamesi, Sivas Kongresi Beyannamesi, Misak-1 Millî Beyannamesi, Ankara: TBMM Basımevi, 2015, s. 35-36.

բանակի պաշտպանության ներքո: Այլ խոսքերով՝ թուրքերը կորցրել էին արաբական երկրները և հնարավորություն չունեին դրանք վերանվաճել: Այս պայմաններում նրանց մնում էր միայն «ճանաչել» արաբ ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Նախապատերազմական օսմանյան պետության մնացած բոլոր տարածքները, որոնք Մուհուսի գինադադարի կնքման օրը չէին գրավված դաշնակիցների կողմից, հայտարարվում էին Օսմանյան կայսրության անքաժանելի միասնություն կազմող տարածք: Այդպիսով, բացառվում էր Արևոյան Հայաստանի և Հայկական հարցի գոյությունը, այն, ինչը ստիպված ընդունել էր Երիտթուրքերի կառավարությունը 1914 թ. հունվարին՝ համաձայնելով օտար պետությունների հսկողության ներքո իրականացնել բավական լուրջ բարենորոգումներ կայսրության հայկական վիլայեթներում:

Հայ ժողովրդի համար կարևոր նշանակություն ուներ նաև 2-րդ կետը: Այն վերաբերում էր Կարսի, Արդահանի և Բաթումի լիվաներին (գավառներին), որոնք, ինչպես հայտնի է, նախքան Առաջին աշխարհամարտը գտնվում էին Ռուսական կայսրության կազմում: Նշվում էր, թե նրանց բնակչությունը հանրաքվեի արդյունքում արդեն որոշել է միանալ «մայր հայրենիքին», և պատրաստակամություն էր հայտնվում մեկ անգամ ևս այնտեղ անցկացնել հանրաքվե: Իրականում հանրաքվեի մասին դրույթով քեմալականները քողարկում էին այս կետի բացահայտ հակահայկական էությունը, քանի որ այն ուղղված էր հայ ժողովրդի պատմական անառարկելի իրավունքի դեմ: Փաստաթղթում հիշատակված հանրաքվեն ժամանակին անց էր կացվել Մեծ Եղեռնի հեղինակներից մեկի՝

Էնվեր փաշայի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ՝ բազմաթիվ աղաղակող խախտումներով:

Փաստաթղթի երրորդ կետը վերաբերում էր Արևմտյան Թրակիայի, իսկ չորրորդը՝ Նեղուցների կարգավիճակին: Երկու դեպքում էլ նախատեսվում էր պահպանել օսմանյան տիրապետությունը: Հինգերրորդ կետով հայտարարվում էր, որ Օսմանյան կայսրությունում բնակվող փոքրամասնությունների իրավունքների պահպանումը պայմանավորված կլինի հարևան երկրներում մուսուլմանների իրավունքների պահպանմամբ: Այս ծևակերպումը տարրերվում էր Մուաթաֆա Քեմալի առաջարկած տարրերակից և վկայում էր, որ խորհրդարանի անդամները, հավանական է՝ Կոստանդնուպոլիսի կառավարության կողմնակիցների առաջարկով, փորձել էին հանդես գալ մի փոքր ավելի «ճկուն» դիրքերից՝ ցույց տալով դաշնակիցներին, որ «Ազգային ուժատը» հարգում է նրանց կողմից առաջ քաշված սկզբունքները՝ միաժամանակ առիթը բաց չթողնելով օգտագործել բալկանյան և կովկասյան հարևան երկրներում բնակվող մուսուլմաններին՝ որպես գործիք հարևանների վրա ճնշում իրականացնելու նպատակով:

Վերջին՝ վեցերրորդ կետը փաստորեն ազդարարում էր, որ Օսմանյան կայսրությունը ոչ միայն չի ճանաչում կապիտույսացիաները, այլև պետական պարտքի վճարումներն իրականացնելու է ընտրովի՝ ելնելով այն հանգամանքից՝ արդյո՞ք խոչընդոտում են դրանք երկրի զարգացմանը, թե՛ ոչ:

Ընդհանուր առմամբ՝ «Ազգային ուժատն» աչքի էր ընկնում ազգայնամոլական բնույթով՝ լիովին համապատասխանելով քեմալական շարժման գաղափարական և քաղաքական

հիմնադրույթներին: Այն ավելի շատ հիշեցնում էր պատերազմում հաղթանակած, այլ ոչ թե պարտված երկրի խորհրդարանի հայտարարություն, որը գործում էր Անտանտի հաղթող պետություններից Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի գինված ուժերի հսկողության տակ գտնվող մայրաքաղաքում:

Պատահական չէ, որ «Ազգային ուժատն» առաջացրեց վերջիններիս դժգոհությունը և սուր հակագրեցությունը: Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջը բնութագրեց այն որպես վտանգավոր, որն արգելվ կարող էր դառնալ Անտանտի և Օսմանյան կայսրության միջև նախատեսվող խաղաղության պայմանագրի ստորագրման համար: Որոշվեց վերջ դնել խորհրդարանի գործունեությանը, ինչպես նաև ավելի խիստ հսկողության տակ վերցնել մայրաքաղաքը, որտեղ հետզհետե ուժեղանում էին քեմալականների կողմնակիցները: Սովորանի համաձայնությամբ 1920 թ. մարտի 16-ին Կոստանդնուպոլիսը պաշտոնապես հայտարարվեց գրավված դաշնակիցների կողմից: Նրանց գինված ստորաբաժանումների թվաքանակը մայրաքաղաքում ու շրջակայքում հասցվեց 60 հազարի: Հայտարարվեց ռազմական դրություն, դաշնակիցները ցրեցին խորհրդարանը, ծերբակալեցին պատգամավորների մի մասին, ինչպես նաև աչքի ընկնող քաղաքական այն գործիչներին, որոնք պաշտպանում էին քեմալականներին:

Անտանտի երկրները ճիշտ էին կոսիել Քեմալի մտադրությունները՝ «Ազգային ուժատի» նախապատրաստումը և ընդունումը նշանակում էին, որ նա արդեն սկզբունքորեն որոշում է կայացրել պատերազմ սկսելու մասին: Նրանց ծեռնարկած միջոցները կարող էին գործադրվել միայն մայրաքաղա-

քում: Սակայն Քեմալի թիրախը Կ.Պոլիսը չէր: Նա որոշել էր սկսել «Ազգային ուստի» դրույթները բռնի ուժով իրականություն դարձնելու քաղաքականությունը կայսրության հակառակ կողմից՝ Արևելքից: Նա արդեն ընտրել էր այդ քաղաքականության առաջին թիրախը՝ դա Հայաստանի Հանրապետությունն էր: Թուրքիայում իրատարակված նյութերը, այդ թվում նաև Զինված ուժերի Գլխավոր շտաբի կողմից, հնարավորություն են տալիս վերականգնելու 1920 թ. ընթացքում հոյժ գաղտնիության պայմաններում Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստման ընթացքը:

Պատահական չէ, որ Մուսթաֆա Քեմալն առաջին անգամ հայտնում է Հայաստանի դեմ պատերազմ սկսելու անհրաժեշտության վերաբերյալ իր եզրակացության մասին 1920 թ. փետրվարի 5-ին, Կ.Պոլսում խորհրդարանի կողմից «Ազգային ուստի» գաղտնի ընդունումից մեկ շաբաթ անց, ինչը նշանակում էր, որ նախապատրաստման «գաղափարական» փուլն ավարտված է և կարելի է անցնել բուն պատերազմի նախապատրաստմանը: Այդ օրը Մուսթաֆա Քեմալը, որն ընտրվել էր ազգայնամոլական շարժման Ներկայացուցչական մարմնի ղեկավար, նրա անունից ծածկագրով դիմում է 15-րդ կորպուսի հրամանատար Քարաբեքիր փաշային և առաջարկում<sup>87</sup>, որ Հայաստանի դեմ հարձակման անցնելու նպատա-

<sup>87</sup> Իր օրագրում Քարաբեքիրը 1920 թ. փետրվարի 6-ին կատարում է հետևյալ գրաբումը. «Մ. Քեմալի առաջարկը Կովկասում հարձակման մասին» - Տես. Karabekir Kâzım, Günlükler (1906 - 1948). 1. Cilt. Çeviriyyazi: Budak Kayabek. Hazırlayan: Yücel Demirel. İstanbul: Yapı Kredi Yayınları, 2009, s. 663.

կով սկսվի «պաշտոնական կամ ոչ պաշտոնական գորակոչ»<sup>88:</sup>

Քեմալի վերը նշված ծածկագիրը կարևոր փաստաթուղթն է, որը վկայում է, որ նա էր, որ նախաձեռնեց Հայաստանի դեմ պատերազմը և որ նա այդ արեց դեռևս 1920 թ. փետրվարի սկզբին, նախքան Սկրի դաշնագրի ստորագրումը: Թուրքիայի Հանրապետության 201. Գլխավոր շտաբի հրատարակություններից մեկը, հիմք ընդունելով այդ ծածկագիրը, Քեմալին բնութագրում է որպես «Արևելքում իրականացվելիք հարձակման հիմնական գաղափարի» հետինակ<sup>89:</sup> Ուշագրավ է, որ Քարաքեքիրին հանգիստ չէին տալիս Քեմալի «Դափնիները՝» որպես Հայաստանի դեմ պատերազմի նախաձեռնող: Իր հուշագրությունների ստվարածավալ հատորում նա գրում է, որ պատերազմի մասին ինքը «մտածել» էր դեռևս Քեմալից մեկ տարի առաջ<sup>90...</sup>

Ի պատասխան Քեմալի «առաջարկին»՝ Քարաքեքիր փաշան հայտնում է, որ մի կողմից՝ բնակիմայական պայմանները Հայաստանի դեմ բացվելիք ռազմաճակատում անբարենպաստ են, ինչը կրժվարացնի զորքերի մատակարարման խնդիրները, իսկ մյուս կողմից՝ քանի դեռ բոլշևիկները չեն անցել Կովկասյան լեռնաշղթան և չեն մտել Ադրբեյջան, թուրքական բանակը կարող է ենթարկվել պարտության: Նա մաս-

<sup>88</sup> Տես փաստաթղթի տեքստում. Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 466.

<sup>89</sup> Türk İstiklâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 56.

<sup>90</sup> Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 463.

Նավորապես նշում է, որ ձմեռվա պայմանները շատ ծանր են, առատ ձյուն էր տեղացել, և հրաժարվում է կատարել հրամանը<sup>91</sup>: Քեմալը և Ներկայացուցչական մարմինը համարում են հրամանատարի առարկությունները հիմնավորված և ընդունում են դրանք<sup>92</sup>: Զորակոչը հետաձգվում է:

Սակայն Մուսթաֆա Քեմալը չի հրաժարվում Հայաստանի դեմ պատերազմ սանձազերծելու իր գաղափարից՝ որպես պատրվակ օգտագործելով Անտանտի երկրների կողմից 1920 թ. մարտի 16-ին մայրաքաղաք Կոստանդնուպոլիսի պաշտոնապես գրավումը: Նա հենց նոյն օրը՝ մարտի 16-ին, նորից դիմում է Քարաքերիրին և հարցնում նրա կարծիքը Հայաստանի դեմ պատերազմ սկսելու բարենպաստ ժամկետների մասին<sup>93</sup>: Քարաքերիրի պատասխանը վկայում է, որ նա դեռևս անբարենպաստ է համարում և՛ ուազմաքաղաքական իրադրությունը, և՛ բնակլիմայական պայմանները՝ հարձակում սկսելու տեսակետից: Նա մասնավորապես նշում է, որ Էրզրումի (Կարինի) և Սարիղամիշի միջև գտնվող տարածաշրջանում մեծ քանակությամբ ձյուն է նստած և այդ պատճառով հնարավոր կինի հարձակումը սկսել ապրիլի սկզբներին, իսկ ավելի լավ է՝ ապրիլի կեսերից հետո: Միաժամանակ նա առաջարկում է արդեն սկսել նախապատրաստական աշխատանքները հար-

<sup>91</sup> Տես փաստաթղթի տեքստում. Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 467-468.

<sup>92</sup> Türk İstiklâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 57.

<sup>93</sup> Տես. [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 41.

ձակման համար և սպասել բարենպաստ պահին<sup>94</sup>: Քեմալը համաձայնում է Քարաքերիրի առաջարկին, ինչի մասին և հայտնում է նրան:

Այսպիսով, պարզ է դառնում, որ արդեն 1920 թ. մարտից սկսվում են Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստման աշխատանքները:

Քյազըմ Քարաքերիր փաշան, որն ուշադիր հետևում էր բոլշևիկյան Ռուսաստանի Կարմիր բանակի գործողություններին, լրատվություն ստանալով, որ Կարմիր բանակը պարտության է մատնել Դենիկինի գործերին և ճանապարհ է բացել դեպի Կովկաս, այս անգամ արդեն ինքն է դիմում է Մուսթաֆա Քեմալին՝ առաջարկով. սկսել հարձակումը Հայաստանի ուղղությամբ՝ Կարմիր բանակին հնարավորինս ավելի առաջխաղացման պայմաններում հանդիպելու և Կարսի, Արդվինի ու Արդահանի սանջակները գրավելու համար:

Իր գեկուցագրում՝ ուղղված Մուսթաֆա Քեմալին 1920 թ. մարտի 28-ին, , Քարաքերիրը, մասնավորապես, նշում էր, որ ազգի և պատմության առջև մեծ պատասխանատվություն կինի, եթե բաց թողնվի պահը՝ հասնելու թուրքիայի այն սահմաններին, որոնք նախանշված էին ոռուների հետ ստորագրված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Նրա գեկուցագրից պարզ է դառնում, որ Հայաստանի վրա հարձակման նպատակն է լինելու գրավել ողջ տարածքները՝ մինչև Արաքս գետը: Նա նաև նշում է, որ արդեն սկսվել են նախապատրաստական աշխատանքները, և մեկ անգամ ևս ընդգծում է, որ

<sup>94</sup> Այդ փաստաթուղթը հրատարակել է Քյազըմ Քարքերիրը: *Sıra Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz.* İstanbul: Türkiye, 1959-1960, s. 534-535.

այդ տարվա, այսինքն՝ 1920 թ. ձմեռը չափազանց խիստ լինելու պատճառով, ապրիլի 15-ից ավելի վաղ գործողություններ սկսելն անհնարին է: Միաժամանակ նա խնդրում է արդեն սկսված բոլոր նախապատրաստական աշխատանքները պահել գաղտնի<sup>95</sup>:

Մուսթաֆա Քեմալը, ստանալով և քննարկելով Քարաքերի վերը նշված գեկուցագիրը, հանգում է եզրակացության, որ անհրաժեշտ է արագացնել Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստական աշխատանքները՝ ապահովելով գաղտնիությունը, մասնավորապես գաղտնի պահելով հարձակումն սկսելու ճշգրիտ ժամկետը: Նա եզրակացնում է, որ նախապատրաստվող պատերազմը թուրքական պետության և թուրք ազգի փրկության միակ միջոցն է<sup>96</sup>:

Թուրքական փաստաթղթերի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու պատերազմի նախապատրաստման ուղղությամբ իրականացվող գործնական քայլերի մասին: Մասնավորապես, Քարաքերի րու, որպես առաջին քայլ, հրապարակում է մի հայտարարագիր, որը նպատակ ուներ սահմանամերձ շրջաններում տարածելու հակահայկական տրամադրություններ և համախմբելու բնակչությանը Հայաստանի Հանրապետության դեմ՝ ներկայացնելով վերջինիս որպես թշնամի: Հայտարարագրում հասուկ շեշտվում էր մահմեդական ազգաբնակչության միասնական

<sup>95</sup> Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 58-59.

<sup>96</sup> Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 59.

գործողությունների անհրաժեշտությունը՝ այդպիսով ձգտելով օգտագործել նաև քրդերին նախապատրաստվող պատերազմում<sup>97</sup>:

Միաժամանակ սկսվում են աշխատանքները Հայաստանի դեմ հարձակման գործողությունների ծրագիրը նախապատրաստելու ուղղությամբ: Այդ ծրագիրը պատրաստ եղավ շուրջ երկու ամիս անց և 1920 թ. մայիսի 26-ին ուղարկվեց Քարաքերիի հրամանատարության ներքո գտնվող կորպուսի ստորաբաժանումներին: Այստեղ որպես հարձակման թիրախ նշվում էին Իգդիրի գրավումը և Արաքս գետին հասնելը: Այդ օպերատիվ պլանը նախատեսում էր, որ հյուախից թուրքական զորքերը կստանան բոլշևիկների աջակցությունը, ինչը կիեշտացնի նրանց առաջխաղացումը: Այն հատուկ նշում էր, որ պատերազմի նպատակն է լինելու ապահովել «Ազգային ուժստով» նախանշված Թուրքիայի սահմանները, որոնց մեջ մտնելու էին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլ նաև Կարսի, Արդահանի, Արդմինի նահանգները, ինչպես նաև Նախիջևանը և Իգդիրը<sup>98</sup>:

Ապրիլի վերջերին, ավելի հստակ ապրիլի 26-ին, երբ բնակչիմայական պայմանները դարձան բարենպաստ և հայտնի դարձավ, որ Կարմիր բանակը մտել է Ադրբեյջան, 15-րդ կորպուսի հրամանատար Քարաքերի փաշան մի նոր զեկուցագրով դիմեց Մուսթաֆա Քեմալին, հայտնելով, որ ար-

<sup>97</sup> Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 59-60.

<sup>98</sup> Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 59.

դեն ստեղծվել են Հայաստանի դեմ պատերազմ սկսելու համար բարենպաստ պայմաններ: Նա ընդգծում էր, որ արդեն իսկ կորպուսը սկսել է պատերազմի նախապատրաստական աշխատանքները, որոնք կավարտվեն երկու շաբաթ անց: Քարաբեքիրը Քեմալի ուշադրությունը հրավիրում էր 2 հանգամանքի վրա: Առաջին. երբ ավարտվեն նախապատրաստական աշխատանքները և կորպուսը պատրաստ լինի հարձակմանը, զորքերին երկար ժամանակ սպասողական վիճակում պահելը կազդի նրանց մարտունակության վրա: Երկրորդ հանգամանքը քաղաքական բնույթի էր: Քարաբեքիրը մտավախություն ուներ, որ Կարմիր բանակի առաջխաղացումը Հարավային Կովկասում կարող է կանգնեցնել իրենց՝ թուրքերին, փաստի առջև, քանի որ Կարմիր բանակը կարող է շրունակել հարձակումը նաև Հայաստանի ուղղությամբ: Այդ պատճառով Քարաբեքիրն առաջարկում էր, որ պատերազմ սկսելու որոշումն ընդունվի անհապաղ<sup>99</sup>:

Հաջորդ օրը՝ ապրիլի 27-ին, Քեմալը, ի պատասխան Քարաբեքիրի վերը նշված գեկուցագրի, հայտնում է, որ պատերազմի մասին վերջնական որոշումը կարող է ընդունել միայն Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և պետք է սպասել նրա որոշմանը՝ միաժամանակ շարունակելով նախապատրաստական աշխատանքները:

Մուսթաֆա Քեմալի կողմից Քարաբեքիրին ուղարկված հրամանում նշվում էր, որ հաստատվել են դաշնակցային հարաբերություններ բոլշևիկյան Ռուսաստանի հետ և նախա-

<sup>99</sup> Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 79.

տեսվում է նրա հետ անցկացնել համատեղ գործողություններ անզիական իմպերիալիստների և նրանց դաշնակից Հայաստանի Հանրապետության դեմ: Այդպիսով, Քեմալը հրամայում էր Քարաբեքիրին դեռևս գերծ մնալ Հայաստանի վրա հարձակումից, քանի որ Ռուսաստանի հետ համագործակցությունը, ինչպես նաև Ռուսաստանից ստացվելիք լայնածավալ օգնությունը դեռևս քննարկման փուլում էին<sup>100</sup>:

Քարաբեքիրը, գնահատելով առաջին հերթին տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը, մայիսի 6-ին նոր գեկուցագրով դիմում է Քեմալին՝ Նշելով, որ, իր կարծիքով, արդեն ստեղծվել է բարենպաստ իրադրություն Հայաստանի վրա հարձակվելու համար, քանի որ Հայաստանի սահմանին է գտնվում Կարմիր բանակը: Քարաբեքիրն ընդգծում էր, որ «պահը չի կարելի բաց թողնել»<sup>101</sup>:

Նոյն օրը Քեմալը, պատասխանելով Քարաբեքիրին, նշում է, որ դեռևս վաղ է սկսել Հայաստանի դեմ պատերազմը, քանի որ արտաքին դրությունն անբարենպաստ է, նա, մասնավորապես, նշում է, որ դեռևս պարզ չէ, թե ինչ կոնկրետ պայմանների հիման վրա հնարավոր կլինի դաշինք կնքել բոլշևիկների հետ: Ընդգծենք, որ կառավարությունը քննարկել է, ինչպես նշված Քեմալի կողմից ստորագրված

<sup>100</sup> Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 80.

<sup>101</sup> Stein գեկուցագրի տեքստում. Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 705-706.

փաստաթղթում, «Հայաստանի կառավարության մեջտեղից վերացման և ոչնչացման» հարցը<sup>102</sup>:

Քեմալի վերը նշված գորությունը ցույց է տալիս, որ նա Հայաստանի դեմ պատերազմը դիտարկում էր՝ հաշվի առնելով Թուրքիայի դեմ աշխարհում գոյություն ունեցող բացասական վերաբերմունքը: Նա գրում էր, որ «հայկական իրադարձությունները», նկատի ունենալով Հայոց ցեղասպանությունը, ողջ քրիստոնյա աշխարհը տրամադրել են թուրքերի դեմ, և եթե Թուրքիան պատերազմ սկսի Հայաստանի դեմ, դա կառաջացնի հակաթուրքական տրամադրությունների նոր ալիք: Այդ պատճառով նա իրամայում է Քարաբեքիրին շարունակել գաղտնի նախապատրաստվել պատերազմին և սպասել իրամանի, որը կտրվի, եթք ստեղծվի բարենպաստ իրավիճակ<sup>103</sup>:

Դրանից հետո շուրջ երկու ամսվա ընթացքում Քեմալի և Քարաբեքիրի միջև տեղի է ունենում ինտենսիվ գրագրություն: Հունիսի 1-ին Կառավարությունը Քեմալի դեկարությամբ, արձագանքելով Քարաբեքիրի հերթական առաջարկին, մեկ անգամ ևս հետաձգում է Հայաստանի վրա հարձակման ամսաթիվը, նշելով, որ անհրաժեշտ է ապահովել այնպիսի պայմաններ, որ հնարավոր լինի ստանալ ուազմական օգնություն,

<sup>102</sup> Stein կառավարության որոշման տեքստում. [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 131.

<sup>103</sup> [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s.132.



Քեմալը՝ Յըլլորըմ բանակային խմբի նորանշանակ  
հրամանատար. աշխարհական պատերազմի նախկին հրամանատար  
Լ. Ֆռն Չանդերը. 31.10.1918




Քեմալը, Էնվերը և Չանդերը. 1917 թ.



Քեմալը Բիթլիսի մոտակայքում, 1916 թ.



Քեմալ (աջից) և Քարաքերիրը



Թուրքիայի քարտեզը՝ բառ Ազգային ուխտի



Սուսաթափա Քեմալը գորավարժության  
ժամանակ



Թուրք զավթիչները Հայաստանի  
Հանրապետությունում, 1920 թ.

քանի որ քեմալյականների ուժերը միայնակ չեն կարող պարտության մատնեն հայկական բանակին<sup>104</sup>:

Աստիճանաբար ավելի հստակ տեսք էր ստանում քեմալյականների դաշինքը ոուս բոլշևիկների հետ: Այս պայմաններում, 1920 թ. հունիսի 6-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը՝ Մուսթաֆա Քեմալի ղեկավարությամբ, որոշում է ընդունում Հայաստանի վրա հարձակում սկսելու վերաբերյալ: Որպես հարձակման թիրախ նշվում են Սողանլի լեռնանցքի գրավումը և Կարսի, Արդվինի և Արդահանի միացումը Թուրքիային: Կառավարության այդ որոշման տակ քացի Քեմալից ստորագրել են գլխավոր շտարի պետ Իսմերը, կառավարության անդամներ Իսմայիլ Ֆազլը, դոկտոր Ադնանը, դոկտոր Ռոզա Նուրը, Զելալեդին Արիֆը և Զամիլ Բեյը: Կառավարության որոշումը ենթադրում էր, որ հարձակման ճշգրիտ ժամկետը կորոշվի 15-րդ կորպուսի հրամանատար Քարաքերիի կողմից<sup>105</sup>:

Սկսելով իրականացնել կառավարության վերը նշված որոշումը՝ Քարաքերին արդեն երկու օր հետո, 1920 թ. հունիսի 8-ին, իրապարակայնորեն հայտարարում է զորահավաք: Հետաքրիր է, որ, ինչպես երևում է զորահավաքի մասին հայտարարության տեքստից, մահմեդական բնակչությանը համախմբելու նպատակով Քարաքերիրը նոյնիսկ թոյլ էր

<sup>104</sup> Տես կառավարության որոշման տեքստում [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 146-149.

<sup>105</sup> Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 84.

տվել իրական իրադրության կեղծիք՝ հայտարարելով, որ «մահմեդական բանակները մոտեցել են մեզ և կարող են մեկնել օգնության ձեռք»: Այդ հայտարարության մեջ ասվում էր, որ «մինչև այժմ թուրքերի նկատմամբ ամենամեծ թշնամությունը ցույց են տվել հայերը», ինչը երբեք չի կարող մոռացվել: Հայտարարության մեջ ընդգծվում էր նաև, որ հայերի կողմից թույլ տրված այդ ահավոր «զոլումի» և անարդարության դեմ թուրքերի հետ համախմբվել են բոլշևիկները և մահմեդական բանակները, որոնք պետք է ոչնչացնեն բոլոր թշնամիներին<sup>106</sup>:

Այդպիսով, կառավարության որոշումով ավարտվում է Հայաստանի դեմ պատերազմի նախապատրասման վերջին փուլը: Ընդհանուր առմամբ նախապատրաստումը տևեց շուրջ կես տարի: Այն սկիզբ առավ Մուսթաֆա Քեմալի նախաձեռնությամբ և ընթացավ նրա անմիջական դեկավարության ներքո:

### 3. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԻՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հայաստանի վրա հարձակման վերջնական ժամկետը որոշվեց հաշվի առնելով իհմնականում արտաքին գործոնը: 1920 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին իրադրությունն այնպիսին էր, որ Հայաստանի դեմ նախանշվող պատերազմին չէին միջամտի ո՞չ արևմտյան երկրները, ո՞չ էլ բոլ-

<sup>106</sup> SKU. Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 85.

շահիկները: Որոշիչ Նշանակություն ունեցավ քեմալականների և բոլշևիկների միջև փաստացի դաշնակցային հարաբերությունների հաստատումը: 1920 թ. սեպտեմբերի 8-ին Կարին (Էրզրում) հասավ Ռուսաստանից՝ որպես օգնություն ուղարկված 200 կիլոգրամ ռուկին: Նրա մի մասը հանձնվեց Քարաքեֆիրի հրամանատարության տակ գտնվող բանակին, մյուս մասը ուղարկվեց Անկարա և օգտագործվեց քեմալակների պաշտոնյաների և սպաների աշխատավարձերը վճարելու նպատակով:

Հրամանը՝ հարձակվելու Հայաստանի վրա, տրվեց 1920 թ. 20 սեպտեմբերին: Այն կառավարության անունից ստորագրված է Մուսթաֆա Քեմալի կողմից<sup>107</sup>: Հարձակման նպատակն էր հոչակվում «հայկական զինված ստորաբաժանումների ոչնչացումը»:

Հայաստանի սահմանին կենտրոնացվել էր 50 հազարանոց բանակ, որի կազմի մեջ մտնում էին նաև խաղաղ ազգաբնակչության դեմ թալիանի և վայրագությունների պատրաստ անկանոն զինված ջոկատները:

Հետևելով Անկարայից ստացված հրամանին Քարաքեֆիրը սեպտեմբերի 24-ին իր հերթին հրամայեց իր հրամանատարության տակ գտնվող զորամիավորումներին սեպտեմբերի 26-ին ցերեկվա ընթացքում ավարտել բոլոր նախապատրաստական աշխատանքները և 26-ից 27-ի գիշերն անցնել հարձակման: Նախիջևանի շրջանում նոյն օրը պետք է հա-

<sup>107</sup> Հրամանի տեքստը տես. Doğu Cephesi Komutam Kâzım Karabekir Paşa Hazretlerine, Ankara, 20 Eylül, Şifre, - [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazımları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 189-190.

մատեղ հարձակում սկսելին թուրքական և ռուսական ստորաբաժանումները: Հետագայում հարձակումը հետաձգվեց մեկ օրով և սկսվեց սեպտեմբերի 28-ին: Այդահատվ իրականություն դարձավ Մուստաֆա Քեմալի դեռևս 1920 թ. փետրվարին առաջ քաշած գաղափարը Հայաստանի դեմ պատերազմ սկսելու վերաբերյալ:

Հայաստանի դեմ ռազմական գործողությունների ընթացքում Քեմալի դերը նվազեց, առաջին պահն այլան մղվեց Արևելյան ռազմաճակատի հրամանատար Նշնակված Քյազըմ Քարաբերի փաշան:

Նրա դեկավարած բանակը, որին միացել էին բազմաթիվ զինված ավագակախմբեր, ներս խուժեց Հայաստան, ամենուրեք տարածելով մահ ու ավերածություն: Այդ “հերոսությունների” համար Քարաբերիին շնորհվեց ֆերիքի (գեներալ լեյտենանտի) զինվորական կոչում<sup>108</sup>, իսկ պատերազմի ավարտից հետո նա պարգևատրվեց “Կանաչ և կարմիր ժապավեններով Անկախության մեդալով”<sup>109</sup> և մտավ հանրապետական Թուրքիայի պաշտոնական պատմության տարեգրության մեջ որպես “Արևելյի նվաճող”<sup>110</sup>: Իր անկախ հայցըներով աչքի ընկնող թուրք պատմաբան Զեմալ Քութայը ժամանակին Քարաբերիի գործունեությանը տվել է ավելի

<sup>108</sup> Erat Muhammed, Kâzım Karabekir Paşa'nın Ermeniler Üzerine Harekâti (1920). – Kafkas Araştırmaları, II, 1996, s. 102.

<sup>109</sup> Erat Muhammed, Yılmaz Halide, Kâzım Karabekir'in Hayatı ve Çanakkale Savaşlarındaki Rolü. - T. C. Çanakkale Onsekiz Mart Üniversitesi Eğitim Fakültesi Tarih Öğretmenliği, 4: Çanakkale Savaşı Semineri, 2003, s. 17.

<sup>110</sup> Turan Şerafettin, Türk Devrim Tarihi II: Ulusal Direnişten Türkiye Cumhuriyeti'ne. İstanbul, 1992, s. 202.

իրական գնահատական, բնութագրելով այն որպես “Հայաստանի ոչնչացում”<sup>111</sup>:

Փաստորեն, Քարաբեքիրը կատարում էր Քեմալի կամքը: Նրա ղեկավարած բանակի գործելակերպը խաղաղ բնակչության նկատմամբ շարունակում էր երիտթուրքերի ցեղասպանական «ավանդույթները»<sup>112</sup>: Այդ նմանությունը ակնհայտ էր նաև ժամանակակիցների և նոյնիսկ հայ կոմունստների համար: Բ. Լեգրանին ուղղված նամակում Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի կոմիսար Ա. Մոավյանը ընգծում էր այդ հանգամանքըն<sup>113</sup>:

Սակայն նոյնիսկ Քարաբեքիրը մինչև վերջ չէր հասկանում իր ղեկավարի և վաղեմի ընկերոց՝ Քեմալի բուն նպատակը, կապված Հայաստանի դեմ պատերազմի հետ: Դրա մասին պատկերացում է տալիս հետևյալ միջադեպը:

1920 թ. նոյեմբերի 5-ի երեկոյան Քարաբեքիրի գորքերը դիրքեր զբաղեցրեցին Ալեքսանդրապոլից դեպի արևմուտք գտնվող բարձրունքների վրա և այդպիսով անմիջական վտանգ ստեղծեցին քաղաքի համար: Հաջորդ օրվա առավոտյան Քարաբեքիրը ստացավ Հայաստանի կառավարության առաջարկը զինադադար հաստատելու մասին, որը ուղարկվել էր դեռևս նոյեմբերի 3-ին: Քարաբեքիրը այն փոխանցեց իր ղեկավարությանը և չսպասելով նրանից համա-

<sup>111</sup> Տես նրա զրչին պատկանող հետևյալ հետազոտությունը. Kutay Cemal, Karabekir Ermenistani Nasıl Yık Etti? İstanbul, 1956.

<sup>112</sup> Ինքը Քարաբեքիրը նույնպես եղել է երիտթուրքական կուսակցության անդամ:

<sup>113</sup> Տես. Հայաստանի պատմության պետական արխիվ, ֆ.114, գ. 2, գ. 31:

պատասխան ցուցումների, անհապաղ ներկայացրեց հայկական կողմին վերջնագրային բնույթի մի շարք պահանջներ: Հաջորդ օրը, նոյեմբերի 7-ին, հայկական կողմը, ընդունելով վերջնագրի պայմանները, Ալեքսանդրապոլը հանձնեց թուրքերին:

Քարաբեքիրի այդ հաջողությունը, փաստորուն, արագացրեց կառավարության և Գիսավոր սպայակույտի կողմից Հայաստանի հետ պատերազմում Թուրքիայի վերջնական նպատակների վերածևակերպման գործընթացը: Այն խտացված ձևով արտահայտվեց զինադադարի վերաբերյալ հայկական կողմին ուղղված երկու վերջնագրերի տեքստերում<sup>114</sup>: Առաջինը, թվագրված նոյեմբերի 6-ով, պարունակում էր ավելի մեղմ պահանջներ, քան թե երկրորդը, որը ներկայացվել էր ընդամենը երկու օր անց՝ նոյեմբերի 8-ին: Նրանցից առաջինը արդյունք էր Քարաբեքիրի “ինքնագործունեության”, որի համար, ամենայն հավանականությամբ, հիմք էր ծառայել Անկարայի կառավարության նոյեմբերի 2-ի համեմատքար ավելի մեղմ պահանջներ ներկայացնող նոտան, իսկ երկրորդը գրված էր Մուսթաֆա Քեմալի կողմից կատարված իրադրության վերագնահատումներից հետո: Նրա համար հիմք էր ծառայել ԹԱՄՖ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Մուհամեթի նոյեմբերի 8-ով թվագրված հույժ գաղտնի ծածկագիրը, որի հասցեատերը

---

<sup>114</sup> Վերջնագրերի տեքստերը տես. Սիմոն Վրացյան, Հայաստանի հանրապետություն. Երևան, 1993, էջ 511 – 513:

Քարաբեքիրն էր<sup>115</sup>: Այստեղ մանրամասն ներկայացված են այդ վերագնահատումների արդյունքում վերջնական ձևակերպում ստացած մոտեցումները, իչպես նաև բացատրված են դրանց շարժադրիթները:

Ուսանելի է համեմատել այդ ծածկագրված փաստաթուրը նոյն օրվա ընթացքում և նոյն դեկավար գործի կողմից ստորագրված մեկ այլ պաշտոնական փաստաթղթի հետ՝ Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը ուղարկված և Թուրքիայի կողմից առաջարկվող խաղաղության ընդհանուր պայմանները պարունակող նամակի հետ. այսինքն դիվանագիտական բնույթի վավերագրի, որը նախատեսնված էր «արտաքին օգտագործման» համար<sup>116</sup>:

Այսպես, օրինակ, եթե առաջինը շեշտում էր, որ Հայաստանը որպես ինքնուրույն գործոն պիտի ոչնչացվի, ապա երկրորդում խոսվում էր այն մասին, որ Թուրքիան ամեն ինչ կանի, որ օգնի Հայաստանին սննդամթերքով և կաջակցի նրա տնտեսության զարգացմանը: Հայաստանի կառավարությանը ուղղված նամակում նշվում էր, թե «թուրք – հայկական սահմանի որոշումը պիտի լինի պարզ վիճակագրության ու հանրաքվեի հարց», իսկ ծածկագիրը բազատրում էր Քարաբեքիր փաշային, որ այդ առաջարկի նպատակը «բխում է սահմանի որոշմանը խոչընդոտելու ձգումից»...

<sup>115</sup> Hariciye Vekili Ahmet Muhtar, Şark Cephesi Kumandanlığına, Ankara, 8/11/1336. – Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

<sup>116</sup> Տերսող տես. Sulu Şartlarımız, Ankara, 8/11/1920. - Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 900.

Հենվելով Անկարայից ստացված նոր ցուցումների վրա Քարաքեքիրը և ներկայացրեց չափազանց ծանր պայմաններ պարունակող երկրորդ վերջնագիրը: Քեմալը շարունակում էր իրականացնել իր գլխավոր մտահաքացումը՝ մեջտեղից վերացնել Հայաստանի Հանրապետությունը...

Հաղթանակը Հայաստանի դեմ պատերազմում արդյունք էր նաև Քեմալի լավ մտածված ու ճկուն դիվանագիտության:

Այսպես, Քարաքեքիր փաշայից Քեմալը պահանում էր, որ ոռաների հետ քննարկումներում լինի «փափուկ» և չմոռանա, որ Խորհրդային Ռուսաստանը Թուրքիայի միակ դաշնակիցն է: Միաժամանակ, նրան բացատրվում էր, թե ինչպես պետք է օգտագործել ոռու բոլշևիկների վախը անգլիացիներից: Որքան էլ զարմանալի կարող է թվալ, այս պարզունակ «աշխարհաքաղաքական» փաստարկները հասնում էին իրենց նպատակին...

Ուշագրավ է Քեմալի իրամանը պարունակող սույն գրքի Թուրքական Փաստաթյաթեր բաժնում գետեղված փաստաթուղթը, որի բուն իմաստը հնարավոր է ըմբռնել միայն ծանոթ լինելով նրա նախապատմության հետ<sup>117</sup>: Ակսած 1920 թ. ամռանից և մանավանդ հայ – թուրքական պատերազմի սկզբնական փուլում քեմալականների ծեռք բերած հաջողություններից հետո Անկարայի և Լոնդոնի միջև ի հայտ էին եկել

<sup>117</sup> Mustafa Kemal, Doğu Cephesi Komutanlığına, Ankara, 30 Kasım 1920. - [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 210-211.

որոշ ընդիհանուր եզրեր<sup>118</sup> և սկիզբ էր որվել գաղտնի շփումների դիվանագիտությանը<sup>119</sup>, իսկ մինչ այդ Անկարայի սերտ հարերերությունները Մոսկվայի հետ սկսել էին որոշ չափով սառել և շփումները ընդունել էին անկանոն բնույթ: Թուրքական աղբյուրները նշում են, թե Քեմալը կարողացավ ճիշտ գնահատել այդ նոր ձևավորվող իրադրությունը և ճարպկորեն օգտվել դրանից: Հենվելով այն հանգամանքի վրա, որ հոկտեմբերի 21-ին Կ.-Պոլսում անգիտացիների հավանությամբ իշխանության էր եկել իհմնականում Մուսթաֆա Քեմալի կողմնակիցներից կազմված նոր կառավարություն, որը ցանկություն էր հայտնել պատվիրակություն ուղարկել Անկարա և բանակցություններ սկսել ազգայնականների կառավարության հետ, նրանք ուսւների մոտ ստեղծեցին այն կարծիքը, որ այդ կառավարությունը, կատարելով անգիտացիների առաջադրանքը, պիտի ձգտի «Անատոլիայի շարժումը քաշել անգիտացիների կողմը, նրան կտրելով բոլշևիկյան ու խլամական աշխարհներից»<sup>120</sup>: Քեմալի այդ քայլը հասավ իր նպատակին. բոլշևիկները սկսեցին ավելի “նրբանկատորեն” հարաբերվել իրենց

<sup>118</sup> Մանրամասն այդ մասին տես հետևյալ մենագրությունում. Նախագետն Ազապի, Բրիտանիա և Հայկական Հարցը 1915 – 1923. Պեյրութ, 1994:

<sup>119</sup> Sonyel Salahi R., Kurtuluş Savaşı Günlerinde Batı Siyasamız (Nisan 1920 – Mart 1921). – Belleten, Ocak 1981, Cilt: XLV/1, Sa: 177, s. 359 – 360.

<sup>120</sup> Համաձայն բուրք հետազոտող է. Թելլալի այդ նպատակն էր հետապնդում ԹԱՍՖ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Սուլթանի հոկտեմբերի 22-ի նամակը Ռուսաստանի արտաքին գործերի կոմիսար Գ. Չիչերինին: Տես. Erel Tellal, Sovyetlerle İlişkiler. – Türk Dış Politikası: Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar. Editör: Baskın Oran. (Cilt I: 1919 - 1980). İstanbul, 2002, s. 170. Այսուհետ Ահմեթ Սուլթանի պաշտոնը սխալմամբ նշված է որպես “արտաքին գործերի ժողովրդական կոմիսար”:

դաշնակցի հետ և դրսւորեցին ավելի մեծ պատրաստակամություն գնալ զիջումների<sup>121</sup>: Միաժամանակ, ԹԱՄԺԻ կառավարությունը ջանք չէր խնայում գաղտնի շփումների միջոցով և խաղարկելով բոլշևիկյան Ռուսաստանի հետ իր դաշնակցային հարաբերությունների փաստը համաձայնության եզրեր շոշափել անգլիացիների հետ<sup>122</sup>: Թուրք հետազոտող Սալահի Սոնյելը, հենվելով անգլիական արխիվային փաստաթղթերի վրա, գրում է, թե 1920 թ. օգոստոսի կեսերից սկսած, այսինքն Սևրի դաշնագրի ստորագրումից անմիջապես հետո, Մուսթաֆա Քեմալը իր գաղտնի ներկայացուցիչների միջոցով փորձ է արել համաձայնության գալ անգլիացիների հետ, նույնիսկ խոստանալով նրանց հրամանատարության տակ դնել Քարաբեքիրի Կովկասյան բանակը և օգտագործել այն բոլշևիկների դեմ<sup>123</sup>: Նշենք, որ Քեմալը փորձում էր ներազդել անգլիացիների վրա նաև Խորհրդայի միջոցով, որի ներկայացուցիչների հետ նույնպես հաստատել էր գաղտնի կապեր: 1920 թ. սեպ-

<sup>121</sup> Այդ առումով հատկանշական է Ի. Ստալինի հեռագիրը Վ. Լենինին, որտեղ նա խորհուրդ է տալիս ձգձգել պայմանագրի ստորագրումը Հայաստանի հետ, քանի որ այն կարող է վանել քեմալականներին և կղզի նրանց համաձայնության գալ անգլիացիների հետ: Տեղերգրամma И. Сталина В. Ленину, Баку, 5 ноября 1920г. - Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Том 2. Часть 1. Составитель, ответственный редактор, автор предисловия и комментария Ю. А. Барсегов. Москва, 2003, с. 216.

<sup>122</sup> Տես այդ մասին. Türk Dış Politikası: Kurtuluş Savaşından Bugüne Olgular, Belgeler, Yorumlar. Editör: Baskın Oran. (Cilt I: 1919 - 1980). İstanbul, 2002, s. 141 – 142.

<sup>123</sup> Տես այդ մասին. Sonyel Salahi R., Kurtuluş Savaşı Günlerinde Batı Siyasamız (Nisan 1920 – Mart 1921). – Belleten, Ocak 1981, Cilt: XLV/1, Sa: 177, s. 359 – 360.

տեմբեր – հոկտեմբեր ամիսներին դրանք իրականացվում էին Քեմալի ոչ պաշտոնական ներկայացուցիչ միջոցով<sup>124</sup>: Սակայն նյեմբերին նա ուղարկեց Հռոմ իր պաշտոնական ներկայացուցիչն՝ ներքին գործերի նախարարին: Սուլթանական կառավարության դեսպանորդը Հռոմում Ֆերրուի բեյը հայտնում էր Կ.-Պոլիս, որ այդ այցին իտալական կառավարական շրջանակների կողմից տրվում մեծ նշանակություն<sup>125</sup>:

Այդպիսով, ապահովվեց առավել բարենպաստ դիվանագիտական մթնոլորտ Հայաստանի դեմ պատերազմում Թուրքիայի տեսանկյունից ռազմավարական նշանակության նպատակների հասնելու համար: Օգտագործելով այդ հանգամանքը քեմալականները, մասնավորապես, հրաժարվեցին հայ-թուրքական բանակցություններում Ռուսաստանի միջնորդությունից, ինչի համաձայնությունը նրանք նախորդը տվել էին<sup>126</sup>: Սակայն երբ պարզ դարձավ, որ Ռուսաստանը ավելի վճռական դիրքորոշում է որդեգրել և զորք է մտցնում Հայաստան, անմիջական շփման մեջ մտնելով Քարաքեքիրի բանակի հետ, այդ հնարքը ժամանակավորապես կորցրեց իր նշանակությունը և նոյնիսկ սկսեց դիտարկվել որ վտանգավոր հետևանքներով հղի: Այդ պայմաններում և հետևեց Թուրքական

<sup>124</sup> Sonyel Salahi R., Kurtuluş Savaşı Günlerinde Batı Siyasamız (Nisan 1920 – Mart 1921). – Belleten, Ocak 1981, Cilt: XLV/1, Sa: 177, s. 356 – 357.

<sup>125</sup> Տե՛ս այդ փաստաթողթը. [Atatürk], Belgelerle Mustafa Kemal Atatürk (1916-1922). Yayına Hazırlayanlar: Uğurhan Demirbaş, Dr. Ali Osman Çınar ve ötekinler, Tercüme: Dr. Ertuğrul Oğuz Çirağan, Sinan Darcan, Necla Büyükkircali. Ankara 2003, s.184.

<sup>126</sup> TBMM Başkanı Mustafa Kemal, Barış Delegeleri Hamit ve Necati Beyefendilere, 23 Kasım 1920. - [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 207.

Փաստաթղթեր բաժնում տեղ գտած վավերագրում Մուսթաֆա Քեմալի կտրուկ հրամանը՝ բոլոր հնարավոր միջոցներով հերքել լուրերը անգլիացիների հետ համագործակցելու մասին:

Ալեքսանդրապոլի ապօրինի պայմանագրի կնքումից հետո Քեմալի դիվանագիտական մարտավարությունը չփոխվեց, սակայն ավելացավ նոր նպատակ. սիրաշահելով և առևտրի մեջ մտնելով Խորհրդային Ռուսաստանի հետ՝ հասնել վերջինիս կողմից ոչ միայն այդ անվավեր պայմանագրի հիմնական դրույթների վավերացմանը, այլ նաև ընդհանրապես Ազգային Ռիստի կողմից նշված Թուրքիայի սահմանների: Միաժամանակ, նա հաջողությամբ շարունակեց օգտագործել բոլշևիկների հետ մերձեցումը՝ արևմտյան երկրներից զիջումներ կորզելու համար:

Մուսթաֆա Քեմալի ջանքերը դիվանագիտական ճակատում «մեջտեղից վերացնել» Հայաստանի Հանրապետությունը փսակվեցին հաջողությամբ 1921 թ., երբ ստորագրվեցին Մոսկվայի ու Կարսի խայտառակ պայմանագրերը: Հայաստանի Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց:

# ԹՈՒՐՔԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 1

ԾԱՇԿԱԳԻՐ

ԱՆԿԱՐԱ, 1 ՀՈՒՆԻՍԻ, 1920 թ.

(ՀԱՆՁՆԵԼ ԱՆՁԱՄԲ)

15-ՐԴ ԿՈՐՊՈՒԽԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՆՈՐԻՆ  
ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՔՅԱԶԸՄ ՔԱՐԱԲԵՔԻՐ ՓԱԾԱՅԻՆ<sup>127</sup>

1. Արևելյան ճակատի գործողությունների վերաբերյալ 1920 թ. մայիսի 30-ի Ձեր հեռագիրը քննարկվել է Նախարարների խորհրդում, հաշվի են առնվել բոլոր հանգամանքները և որոշում է կայացվել դեռևս հետաձգել Հայաստանի դեմ մեր պատերազմը: Ստորև ներկայացվում են այն մոտեցումները և մտահոգությունները, որոնք դրվել են Նախարարների խորհրդի որոշման հիմքում:

Առաջին. Մենք հասկացել ենք, որ արևմտյան երկրների կողմից մեր պետության և ժողովրդի նկատմամբ չի լինի այնպիսի օգնություն և արդարացի վերաբերմունք, որ հնարավոր լիներ ապահովել մեր ազատագրումը և բուն գոյությունը:

Մեր խորհուրդը<sup>128</sup> հասկանում է, որ մեր երկրի ապագան, մեր արևելյան սահմանները կախված են ռուսների և իսլամական աշխարհի հետ համագործակցությունից: Այս հա-

<sup>127</sup> [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 146-147.

<sup>128</sup> Նկատի ունի Նախարարների խորհուրդը:

մագործակցության ամրապնդման նպատակով կարևոր ջանքեր կգործադրվեն:

**Երկրորդ.** Մենք չենք ձեռնարկի որևէ որոշիչ գործողություն առանց բոլշևիկների հետ քաղաքական համաձայնության գալու, ինչպես նաև առանց փոխադարձ հարաբերությունները հստակ պարզաբանելու: Մենք չենք կարող ենթադրել, թե նման գործողության ծավալումն ինչ արձագանք կունենա բոլշևիկների կողմից: Իրականում, բոլշևիկները մեզանից մեծ օգուտ են սպասում, նրանք մեր զինվորների հաղթանակները մեզնից վերցնելու և որպես իրենց հաղթանակ ներկայացնելու հույս ունեն: Արդյունքում մենք ձեռնունայն կմնանք, միայն կդառնանք նրանց ուղեկիցն ու գերին: Պետք չէ մոռանալ, որ Գերմանական պատերազմի մեջ այդպես մտանք:

**Երրորդ.** Մենք կարծում ենք, որ եթե միայն ուազմական տեսանկյունից դիտարկենք, Հայաստանի դեմ պատերազմը հաջողությամբ և անվտանգ ավարտելու համար մենք ուազմական օգնության կարիք ունենք: Եթե Ադրբեյջանից և Վրաստանից հայկական ուժերին չնեղեն, թիւ է հավանականությունը, որ մենք մեր երեք դիվիզիաներով կկարողանանք կարճ ժամանակի ընթացքում ոչնչացնել հայկական ուժերին:

.....

Ազգային մեծ ժողովի նախագահ  
Մուսթաֆա Քեմալ<sup>129</sup>

<sup>129</sup> Փաստաթուղթը պարունակում է 5 բաժին: Ներկայացված է փաստաթորի միայն առաջին ամենակարևոր բաժինը:

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 2

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ  
ՄՈՒՀԱՅԻՐ ԲԵՅԻ<sup>130</sup> ԾԱԾԿԱԳԻՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ  
ՌԱԶՄԱԶԱԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՔՅԱՋԸ ՔԱՐԱԲԵՔԻՐ  
ՓԱՇԱՅԻՆ

(8 Նոյեմբերի 1920թ.)<sup>131</sup>

Անկարա

8/11/1336

Արևելյան ուազմաճակատի հրամանատարությանը

Կասկած չկա, որ Հայաստանի զինադադարի առաջարկն այս պահին, եթե նա մեկուսացված է և՝ արևմտյան, և՝ արևելյան աշխարհներից, նպատակ ունի խուսափել վրա հասնող աղետից: Ուժեղանալուն պես Հայաստանը, բնականաբար, կաշխատի իրականացնել Սկրի պայմանագրով իր վրա դրված Արևելքի հետ մեր կապը կտրելու պարտականությունը, ինչպես նաև հույների հետ համատեղ կիսաթարի մեր կյանքն ու զարգացումը: Անհնարին է, որ Հայաստանը, որը գտնվում է մեծ մահմեդական շրջանակի կենտրոնում, այդ դաժան ժանդարմի պարտականությունից սրտի համոզմունքով հրաժարվի

<sup>130</sup> Ահմեք Սուլեյման, հետազոտում ընդունել է Սոլլաօղլու ազգանունը (1870-1934): Դիվանագետ, փոխարտգործնախարար, 1920 - 1921 թթ. Հածախակի փոխարինում էր Երկարատև արտասահմանյան գործուղումներում գտնվող թեմալական Թուրքիայի առաջին արտգործնախարար Բերքի Սամիին: Եղել է Օսմանյան կայսրության դեսպանը Հունաստանում, Ուկրաինայում, հանրապետության տարիներին զբաղեցրել է դեսպանի պաշտոններ Մուլվայում ու Վաշինգտոնում: Բազմից ընտրվել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր:

<sup>131</sup> Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 901.

և որոշի իր բախտը լիովին կապել Թուրքիայի և իսլամականության հետ: Այդ պատճառով, բացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես մեջտեղից վերացվի: Դրա հետ մեկտեղ, քանի որ այդ նպատակի իրականացումը կախված է մեր հզորության ընծեռած հնարավորությունից և ընդհանուր քաղաքական իրադրության բարենպաստությունից, ապա անհրաժեշտ է վերևում նշված կարևոր նախապայմանների համաձայնեցված նախապատրաստում: Դրանից բխում է, որ քննարկման առարկա չի կարող լինել հայերի հետ պարզ մի գինադադարի համաձայնության արդյունքում մեր հետ քաշվելը: Հայերին փոխանցվող զինադադարի հիմնադրույթները պիտի ուղղված լինեն ոչ թե Հայաստանից դուրս գալուն, այլ հայերին մոլորեցնելուն և Եվրոպայի նկատմամբ խաղաղասեր երևալուն: Սակայն իրականում նրանց արդյունքը պիտի լինի մեր նպատակի աստիճանաբար նախապատրաստման ու հասունացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը:

Ներկայումս բացարձակ անհրաժեշտություն է զորացրել հայկական բանակը և բռնագրավել նրա գենքը՝ այդպիսով հնարավորություն չտալով, որ վերականգնվի նրա ռազմական կառուցը: Երկաթուղիները հսկողության տակ պահելու և մահմեդական ազգարնակչության իրավունքները պաշտպանելու պատրվակով անհրաժեշտ է մեր ռազմական հսկողությունը հաստատել Հայաստանի ողջ տարածքի վրա և այդպիսով մեր ծեռքում պահել Թուրքիան Աղրբեջանին կապող բոլոր ճանապարհները: Վերը նշված այդ նպատակը պիտի իրականացնել քողարկված ու փափուկ ծևով՝ ինչպես խաղա-

ղուլյան պայմանագրի տեքստում, այնպես էլ նրանից բխող գործողություններում՝ հայերի աշքերում մշտապես խաղաղասեր երևալու պայմանով:

Հայկական կառավարությանը հանձնելու նպատակով այսօր Ձեզ ուղարկված գինադադարի պայմանների<sup>132</sup> առաջին կետով սահմանի վերաբերյալ հանրաքվեի սկզբունքի ընդունումը բխում է Հայաստանի հետ սահմանների վերջնական որոշմանը խոչընդունելու ձգտումից: Կարող եք ժամանակավորապես ընդունել Բրեստ Լիտովսկի սահմանի գիծը, քանի որ նպատակ է դրված այդ հարցում հայերի ձեռքից նախև առաջ սահմանի վերաբերյալ գրավոր առաջարկ ստանալ և այդպիսով խոչընդունել բանակցությունների փակուղի մտնելուն: Սակայն անհրաժեշտ է հարատև միջամտության համար հող նախապատրաստել՝ սահմանի մյուս կողմում մնացող մահմեդական փոքրամասնության իրավունքները պաշտպանելու պատրվակով: Պիտի պայմանագրի մեջ մտցնել կետեր, որոնք կապահովեն հնարավորինս արագ թշնամու ձեռքից գենքի բռնագրավումը և նրա բանակի զորացրումը: Անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի թուրքերին գինելու և ազգային գինված ուժեր ստեղծելու ուղղությամբ: Նրանք պիտի կապեն միմյանց հետ Արևելքն ու Արևմուտքը և դարձնեն Աղրբեջանը ինքնուրույն թուրքական պետություն:

<sup>132</sup> Նկատի ունի Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը փոխանցվելիք փաստատությը:

Կառավարության իրական նպատակը պարունակող այս իրահանգը գաղտնի է: Այն նախատեսնված է միայն Ձեզ համար:

Իսնդրում ենք գրավոր հայտնել այս գաղտնագրի լրիվ վերծանման մասին:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար  
Ահմեթ Մուլթար

### ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 3

Մուսթաֆա Քեմալի Ելույթը

Թուրքիայի Ազգային մեծ ժողովում

Էրզրումի պատգամավոր Խսմայիլ բեյի<sup>133</sup> և իր ընկերների՝  
Հայաստանի հետ խաղաղության պայմանների վերաբերյալ  
գրավոր հարցապնդման և արտաքին գործերի փոխնախա-  
րար Մուհիթար բեյի պատասխանի կապակցությամբ  
(18 նոյեմբերի 1920 թ.)<sup>134</sup>

Մուսթաֆա Քեմալ փշ.<sup>135</sup> (Անկարա). – Ուզում եմ հի-  
շեցնել մի կետի մասին և ժողովին ծանոթացնել ուազմական  
խնդիրներին վերաբերող տեղեկություններին, որոնք են ստա-  
ցել եմ ուազմական գերատեսչությունից: Ինչպես նշում է մեծա-  
պատիվ պարոնը<sup>136</sup>, հայերն ընդունել են նախապես առա-  
ջարկված գինադադարի պայմանները: Այդ գինադադարի  
պայմանների հիմքում դրված է եղել երկու հիմնարար դրույթ:  
Առաջին. զենք բռնագրավել հայկական բանակից: Երկրորդ.  
Ելնելով գոյություն ունեցող իրադրությունից՝ ստեղծել չեզոք  
գոտի այն գծի միջև, մինչև որը կնահանջի հայկական բանա-  
կը, և այն սահմանի միջև, որը մենք հետագայում պիտի  
պաշտպանենք: Սակայն դրանից հետո վերսկսվեցին ուազմա-  
կան գործողությունները: Նախկին գիծը շատ առաջ տարանք:

<sup>133</sup> Հետազայում ընդունել է Արսլան ազգանունը:

<sup>134</sup> [Atatürk], Atatürk'ün T.B.M.M. Açık ve Gizli Oturumlarındaki Konuşmaları. Yayına Hazırlayan: Kâzım Öztürk. Ankara, 1990, s. 321 – 322.

<sup>135</sup> Փաշա:

<sup>136</sup> Թերևս, նկատի ունի արտաքին գործերի փոխնախարար Մուհիթար բեյին:

Նախկինում գտնված դիրքերից մեր զորքերն առաջ ընթացան ոչ միայն արևելյան ուղղությամբ, այլ նաև կենտրոնից, ներառյալ Շատախից, դեպի հարավ: Այդ պատճառով, զինադադարի մասին համաձայնության այն մասը, որը վերաբերում էր սահմաններին, իհարկե, ենթարկվեց փոփոխությունների: Դրա վերաբերյալ մեր Գլխավոր սպայակույտը հանդես եկավ մի քանի նոր առաջարկներով: Նրանց մեծ մասի մեջ առանձնապես կարևոր դրույթներ չկան. այս մեկը նոր գծից մի քիչ ավելի արևմուտք է, այն մյուսը՝ մի քիչ ավելի առաջ է: Սակայն այնտեղ նոր տեսակետ էլ է պաշտպանվում: Այն հետևյալն է. հարավից Աղրբեջան տանող ճանապարհները պիտի լինեն լիովին անվտանգ: Ահա այսպիսի առաջարկ ունի Գլխավոր սպայակույտը, պարունայք: Զինվորականները ճիշտ ժամանակին հանդես եկան իրենց առաջարկով:

#### ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 4

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Մուհեար  
բեյի ծածկագիրը Քյազըմ Քարաբեքիր փաշային  
(20-21 նոյեմբերի 1920 թ.)<sup>137</sup>

Անկարա

20-21/11/1336

Արևելյան ռազմաճակատի հրամանատար Նորին գերազանցություն Քյազըմ Քարաբեքիր փաշային

Ի պատասխան 13/11/1336<sup>138</sup> հեռագրի<sup>139</sup>

1...<sup>140</sup>

2. Տարածվել են լուրեր, թե Արևելյան ռազմաճակատում մեր հաղթանակների անվերջանակի շարանի հետևանքով հայկական լրագրերը սգո սև շրջանակներով են լուս տեսել, իսկ մահմեդականները չափազանց ուրախ ու խանդավառ են: Եվրոպայի հետ շփումների պակասը և կապի դժվարությունը խոչընդոտում են Կովկասի իրադարձությունների արձագանքի մասին ավելի լիարժեք տեղեկություններ ստանալուն: Այստեղ հասած ամենավերջին եվրոպական լրագրերը թվագրված են հոկտեմբերի 20-ով, և նրանց մեջ այդ թեմայի վերաբերյալ մանրամասներ չկան:

<sup>137</sup> Հրատարակված է. Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959 – 1960, s. 905 - 906.

<sup>138</sup> 1920 թ. նոյեմբերի 13:

<sup>139</sup> Քարաբեքիրն իր հուշագրություններում այդ վավերագիրը չի հրատարակել:

<sup>140</sup> Ծածկագրի առաջին կետում բնութագրվում են Կ.Պոլսի սուլթանական կառավարության գործունեության հետ առնչվող որոշ խնդիրներ: Այդ հատվածը չենք թարգմանել:

3. Ռուսական խորհրդային կառավարությանը...<sup>141</sup>, որ մեր հարձակման պատճառներն էին. հայերի կողմից իրագործվող կոտորածները, դաշնակների հրաժարումը մեզ հետ խաղաղություն կնքելուց, ինչպես նաև նրանց ցանկությունը որպես անգիտական իմաստիալիզմի գործիք՝ մեր արևելյան վիլայեթները լիովին գրավել և կապ հաստատել Իրաքում գտնվող անգիտական զորքերի հետ... Հնարավոր չեղավ պարզել, թե արդյոք այդ հարցերին նվիրված համապատասխան հեռագիրը հասել է Մոսկվայում մեր Ներկայացուցիչ Բերի Սամիին<sup>142</sup>, հայտնի չեն նաև Ռուսաստանի կառավարության կարծիքը և մոտեցումներն այդ խնդիրների վերաբերյալ: Օգտվելով այս առիթից՝ մեկ անգամ ևս կարևորությամբ խնդրում եմ ամեն գնով ապահովել Ռուսաստանի հետ հուսալի հեռագրային կամ ռադիոկապ:

<sup>141</sup> Հեռագրի թուրքերեն տեքստում այս տեղում դրված է բազմակետ, ամենայն հավանակլությամբ, բառը հնարավոր չի եղել ընթերցել կամ վերծանել՝ այդ տարիներին հեռագրային կապն անհուսալի եր: Նախադասության իմաստը հուչում է, որ այստեղ պիտի լիներ «հայտնել ենք» կամ մեկ այլ նույնիմաստ արտահայտություն:

<sup>142</sup> Բերի Սամի (հետազայում ընդունել է Քունդուհ ազգանունը), (1865 – 1933, որոշ տեղեկություններով՝ 1932): Օսմանյան կայսրության և հանրապետական Թուրքիայի քաղաքական գործիչ, դիվանագետ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ղեկավար պաշտոններ է զբաղեցրել օսմանյան կառավարման համակարգում: Քեմալականների առաջին և երկրորդ կառավարություններում զբաղեցրել է արտարին գործերի նախարարի պաշտոնը (1920 – 1921 թթ.), ղեկավարել է այդ կառավարության առաջին պատվիրակությունը Մոսկվա (1920 թ. հուլիս – սեպտեմբեր): Նրա ղերը Հայոց ցեղասպանության իրականացման մեջ ղեռս վերջնականապես պարզաբանված չէ, քանի որ առկա են իրարամերժ վկայություններ: Տես, օրինակ, Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա: Երևան, 1990, էջ 31 և British Foreign Office Dossiers on Turkish War Criminals. By Vartkes Yeghiayan. La Verne, 1991, p. 325.

4. Հաշվի առնելով բարեկամության մասին պայմանագրի նախատեսվող ստորագրումը, ինչպես նաև մեր հարաբերությունների առանձնահատկությունները, խնդրում եմ, որ երբ կապ կհաստատեք ոռուական զորքերի հետ, Ձեզ նրանցից հեռու չպահեք: Պիտի հաշվի առնել, որ երկու ազգերը համատեղ պայքարում են համաշխարհային իմպերիալիզմի դեմ, և Ռուսաստանը միակ մեծ տերությունն է, որը մեզ ճանաչել է, մեզ հետ հարաբերություններ է հաստատել և կարող է մեզ օգնել, թեկուց և աննշան:

Եթե քննարկվի Ձեզ հայտնի Վանի, Բիթլիսի խնդիրը<sup>143</sup>, ապա այդ հարցում վարվեք փափուկ, բացատրեք, որ ազգերի ինքնորոշման իրավունքի տեսանկյունից այն անընդունելի է և քաղաքական առումով անիրականանալի: Բացատրեք նաև, որ Անկարայի կառավարության կազմավորման նպատակը Ազգային ուժստի կողմից ճանաչված սահմանների շրջանակում քաղաքականապես ու տնտեսապես լիովին անկախ ժողովրդայի ստեղծումն է, և եթե նա այդ ծրագրի շրջանակներից դուրս գա, ապա ժողովուրդը լիովին կկորցնի խանդավառությունը, մեկ անգամ ևս կիհասթափվի և իշխանությունը կանցնի Ստամբուլին: Այդ դեպքում անզիացիները Ֆերիթ փաշային<sup>144</sup> սադրազամ դարձնելու միջոցով կտիրեն ամբողջ խալիֆայության ժողովուրդին, այդ թվում նաև Անատոլիային, ինչը Ռուսաստանի բոլշևիկների համար և՝ Կովկասում, և՝

<sup>143</sup> Նկատի ունի խորհրդային կառավարության առաջարկը՝ հանձնել Վանը, Բիթլիսը և Մուշը Հայաստանին:

<sup>144</sup> Ֆերիթ փաշա, դամար՝ սուլթանական ընտանիքի ներկայացուցիչ (1853 - 1923): Օսմանյան պետական գործիչ, հինգ անգամ գրադեցրել է սադրազամի (կառավարության նախազահի) պաշտոնը: Ղեկավարել է թուրքական պատվիրակությունը Սերում և ստորագրել է Սերի դաշնագիրը:

Ասիայում չափազանց անբարենպաստ հետևանքներ կունենա:

Երկրորդ եղբայրը կարող են իրաքում գտնվող անգիտացիների հետ հեշտությամբ միանալ, ապա դա մեծապես կուժեղացնի անգիտացիների դիրքերն Արևելքում: Լոնդոնի խորհրդարանում իրաքի մանդատի հարցի քննարկումների ժամանակ նախկին վարչապետ Ասրվիթն արդեն իսկ հայտարարել է, թե Մոսուլ պաշտպանել կարողանալու համար անհրաժեշտ է հասնել Սև ծով, և եթե հայերին թույլ տրվի իջնել այդքան դեպի հարավ, ապա անգիտական իմպերիալիզմի համար դա շատ մեծ ծառայություն կլինի: Կարծում եմ, դա անհրաժեշտ է բացատրել...<sup>145</sup>: Մյուս կողմից, խնդրում եմ, որ ամեն պատեհ առիթով զգալ տաք, որ Անկարայի կառավարությունը նախապատրաստվում է իրականացնել մեր երկրի համար անհրաժեշտ արդիական սոցիալական բարենորոգումներ ու հեղափոխություն, ինչն օտարների միջամտությունը կդարձնի անհնարին:

Պարոն, խնդրում եմ Գյումրիում<sup>146</sup> հայերի վերաբերյալ մեր դիրքորոշումը ներկայացնել համաձայն նվաստիս շարադրի:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար  
Ահմեթ Մուհամեթ<sup>147</sup>

<sup>145</sup> Այդպես է թուրքերեն տեքստում: Ըստ ամենայնի, վավերազրի այդ հատվածը հրատարակչի համար եղել է անընթեռնելի:

<sup>146</sup> Նկատի ունի բանակցություններն Ալեքսանդրապոլում:

<sup>147</sup> Բնութագրելով այս և հաջորդ փաստաթուղթը՝ Քարաքիրը գրում է. «Արևելյան գործողության ընթացքում Անկարայի հետ տեղի է ունեցել նաև որոշ նամակագրություն ընդհանուր իրադրության վերաբերյալ»: *Sarı Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye., 1959 – 1960, s. 904:*

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 4

### ԹԱՄԾ Նախագահ

Մուսթաֆա Քեմալի ցուցումը խաղաղության պատվիրակներ,  
մեծապատիկ պարոններ Համիթին<sup>148</sup> ու Նեջաթիին<sup>149</sup>  
(23 նոյեմբերի 1920 թ.)<sup>150</sup>

Հայերի հետ մեր բանակցություններում ոչ մի այլ կողմի միջամտությունն ու միջնորդությունը քննարկման առարկա լինել չեն կարող: Մասնավորաբար, կարող եք հայտարարել, որ անընդունելի է նրանց միջնորդությունը, ովքեր կցանկա-

---

Ուշազրակ է, որ պատասխան ծածկագրում Քարաքերիրը հայտնել է իր մոտեցումները Ահմեր Սուլթարի նամակի միայն այն կետերի վերաբերյալ, որոնք առնչվում էին Կ.Պոլսի սուլթանական կառավարության գործունեությանը՝ անտեսելով Հայաստանի դեմ պատերամի մասին կետերը: Այդ պատճառով Քարաքերիրի՝ վերևում նշված ծածկագրը սույն հրապարակման մեջ չենք ներզրակել: Տերսող տես. Karabekir Kâzim, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye,, 1959 – 1960, s. 906 - 907.

<sup>148</sup> Համիթ թեյը (հետազայում ընդունել է Քափալը ազգանունը) այդ շրջանում եղել է Էրզրումի վալի (նահանգապետ): Հայտնի է եղել «Խելազար Համիթ» մականունով: Ստորագրել է, ի թիվս այլոց, Ալեքսանդրապոլի 1920թ. պայմանագիրը: Համարվում է Սուլթան Սուլիհիի սպանության կազմակերպիչներից:

<sup>149</sup> Այուլեյման Նեջաթի թեյ, հետազայում ընդունել է Գյուների ազգանունը (1890 - 1944), թեմալական շարժման մասնակից, կրթական և հրատարակչական ոլորտների գործիչ: ԹԱՄԾ պատգամավոր է եղել Էրզրումից, աշքի է ընկել հակահայկական ելույթներով ու հարցապնդումներով: Ստորագրել է, ի թիվս այլոց, 1920թ. պայմանագիրը: Հետազայում դասավանդել է քուրքերեն լեզու Կ.Պոլսի Գալաթիյո հայկական վարժարանում: Հեղինակել է հուշագրությունների ոչ ծավալուն գրքով։

<sup>150</sup> Տպագրված է. [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 207.

նան ներկայացնել հայերին և նրանց պաշտպանելու նպատակով կուգենան խառնվել գործին: Հստակ է, որ մենք դուզն անգամ չենք հրաժարվի մեր իրավունքներից: Արտգործնախարարության կողմից Նորին գերազանցություն Քյազըմ Քարաբեքիր փաշային համապատասխան տեղեկություններն արդեն ուղարկվել են, պարոնայք:

ԹԱՄԺ նախագահ  
Մուսթաֆա Քեմալ

## ՓԱՍՏԱԹՈՒՂՅ 5

Ազգային մեծ ժողովի նախագահ Մուսթաֆա Քեմալ  
հեռագիրը Արևելյան ճակատի հրամանատարությանը  
(30 նոյեմբերի 1920 թ.)<sup>151</sup>

Արևելյան ճակատի հրամանատարությանը

Անկարա, 30 նոյեմբերի 1920 թ.

Բաքվում Թուրքիայի ներկայացուցիչ Մեմդուհ Շաքեթ բեյին  
Թիֆլիսում Թուրքիայի ներկայացուցիչ Քյազըմ բեյին<sup>152</sup>

Ինչպես պարզ է դառնում տարբեր տեղերից եկող լուրերից, անգլիացիները դիմում են բոլոր միջոցներին՝ բոլշևիկների և մեր, ինչպես նաև իսլամական երկրների միջև, հարաբերությունները խաթարելու նպատակով։ Նրանք հոյս ունեն, որ երբ այդ նրանց հաջողվի, նրանք երկու հասարակություններին կարող են առանձին-առանձին ճնշել։ Այդ նպատակով տարածվող ասեկուսեների թվում է այն, որ անգլիացիների կողմից Ադրբեյջանը մեզ հանձնելու փոխարեն մենք Կովկասում բոլշևիկների դեմ ճակատ կատեղծենք. դրա նման էլի մի քանի խարեւություններ են շրջանառվում։ Դուք իրավասու և

<sup>151</sup> [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazımları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 210 -211.

<sup>152</sup> Քյազըմ բեյ, հետազոտ ընդունել է Դիրիք ազգանունը (1880 - 1941): Արհեստավարժ զինվորական, հակառապետական շրջանում՝ պետական գործիչ: Մուսթաֆա Քեմալի մերձավոր շրջապատից եք:

պարտավոր եք ձեր տրամադրության տակ գտնվող բոլոր միջոցներով անհապաղ և հստակորեն հերքել այդ տեսակ բոլոր ասեկուսեները:

Անգլիացիների, ֆրանսիացիների կամ էլ իտալացիների կողմից ուղղակի կամ Ստամբուլում նրանց կողմից իշխանության բերված կառավարությունից մեզ խաղաղության առաջարկ չի արվել:

### Մուսթաֆա Քեմալ

## ՓԱՍՏԱԹՈՒՂԹ 6

Թուրքական Կոմունիստական կուսակցության Կենտրոնական վարչության նախագահ Մուսթաֆա Սուլիհիի նամակը

Ազգային մեծ ժողովի նախագահ Մուսթաֆա Քեմալին

(1920 թ. նոյեմբեր<sup>153</sup>)<sup>154</sup>

Ազգային մեծ ժողովի նախագահ Նորին գերազանցություն  
Մուսթաֆա Քեմալ փաշային

Բարու

1...<sup>155</sup>

2. Արևելյան ռազմաճակատում ապստամբ բանակների հաջող հարձակումն<sup>156</sup> այստեղ լավ տպավորություն է առաջացրել: Քանի որ Ձեզանից վերջին ժամանակներին ոչ մի լուր կամ կապավոր այստեղ չի հասել, ապա իրադրությունն ուսումնասիրելու և ավելի հաստատուն հարաբերություններ հաստատելու նպատակով ընկեր Մդիվանիի ղեկավարությամբ ձեր կողմերը մի պատվիրակություն է ուղարկվել:

Այդ հարձակման ընթացքում հայկական սահմաններից ներս չափից ավելի խորանալը հասարակական կարծիքի մեջ որոշ կասկածներ է առաջացրել, որոնք մեր կողմից տա-

<sup>153</sup> Ամիսը որոշված է քուրք իրատարակչի կողմից:

<sup>154</sup> Tuncay Mete, Türkiye'de Sol Akımlar: 1908-1925, 3 Basım. Ankara: Bilgi Yayınevi, 1967, s. 231 – 233.

<sup>155</sup> Նամակի սկզբնական հատվածը, որտեղ խոսվում է Թուրքիայում կոմունիստական գործունեության հնարավորությունների մասին, չենք թարգմանել:

<sup>156</sup> Նկատի ունի ազգայնականների զինված ուժերի Արևելյան ռազմաճակատը, որի հրամանատարն էր Քարաքերիը:

րածված հաղորդագրությունների միջոցով փարատվել են: Մեր կողմից նշվել է, որ այդ հարձակումը վնաս չի պատճառի հայ բանվորին ու գյուղացուն և որ նրա նպատակն է պատժել դաշնակցական կառավարությանը, որը, լինելով Անտանտի գործակալը, չի խորչել կատարել բազմաթիվ խարեւություններ ու ոճրագործություններ:

Ըստ ամենայնի, մեր այդ հաղորդագրությունները հանրային կարծիքը դրական է ընկալել, քանի որ այս անգամ չկար քարոզություն թուրքերի բարբարոսությունների մասին, ինչպես նման դեպքերում սովորաբար լինում էր անցյալում: Նույնիսկ հայ կոմունիստները մամուլում հանդես եկան որպես թուրքական հարձակման կողմնակիցներ և շարունակում են տպագրել լուրեր, որոնք Անատոլիայի ապստամբներին ներկայացնում են որպես արդարացի կողմ:

Ամեն դեպքում, կարծում ենք, ավելորդ չեն նշել, որ հնարավորություն չտրվեց օգտագործել «հայկական կոտորածը» որպես միջոց Ռուսաստանի և Եվրոպայի պրոլետարների կարծիքն Անատոլիական շարժման դեմ ուղղելու և մեզ խարերա որակելու համար:

3. Վրանգելի անհաջողության և Անատոլիայի կողմից Արևմտյան ու Արևելյան ճակատների կայունացման հետևանքով վերջին օրերին ուժեղացել է վտանգը, որ Անգլիան դաշնակցային հարաբերությունների մեջ կմտնի ԱՄԺ<sup>157</sup> կառավարության հետ: Այդպիսի միությունը կհանգեցնի Անատոլիայի ապստամբների մինչև այժմ ձեռք բերածի կորստին: Միաժա-

<sup>157</sup> ԱՄԺ՝ [Թուրքիայի] Ազգային մեծ ժողով:

մանակ, անգլիացիների պատճառով Անատոլիան կզրկվի Սովետներից ուղարկվելիք նյութական ու բարոյական ամեն տեսակ օգնությունից: Այդ պատճառով կարծում ենք, որ մենք չէինք սխալվել, երբ ասել էինք, թե ապստամբները ձգտում են ունենալ Ռուսաստանի հետ ավելի ուժեղ ու գործուն հարաբերություններ:

4. Նախապես արդեն հայտնել էինք, որ մեր կուսակցության կողմից Անատոլիական շարժմանը օգնելու նպատակով կազմվել է Թուրքական Կարմիր գունդ: Այն սրանից մոտավորապես երեք շաբաթ առաջ Կենտրոնական կոմիտեի անդամ ընկեր Մեհմեթ Էմինի<sup>158</sup> հրամանատարության ներքո Նախիջևանի վրայով ուղարկվեց Քյազըմ Քարաբեքի փաշայի տրամադրության տակ: Սակայն այդ ժամանակ Արևելյան ուազմաճակատի հարձակման անցնելու և դաշնակների կողմից Նախիջևանի ճանապարհը փակելու պատճառով հնարավոր չեղավ զինվորներին հասցնել Անատոլիա: Մեր գունդն անցում կատարեց Քերյուսիդից<sup>159</sup> մինչև Արփաչայ և ավարտեց այն հաջողությամբ՝ հակառակորդի ուժերին պատճառելով մեծ վնաս: Մեր զինվորների կորուստները կազմեցին 11 սպանված և մինչև 20 թերթե վիրավոր: Քանի որ ներկայում իշխում է ձմեռը, ապա այդ պատճառով մեր զինվորները քաշ-

<sup>158</sup> Թուրքական աղյուրները նշում են, որ ԹԿԿ այդ գործիչը գտնվել է Էնվերի ազդեցության տակ և հետազայում թեմալականներին մատնել է Էրզրում ժամանած Սուսարաֆա Սուփիկիին՝ այդպիսով փրկելով իր կյանքը: Տե՛ս այդ մասին. Tuncay Mete, Türkiye'de Sol Akımlar: 1908-1925, 3 Basım. Ankara: Bilgi Yayınevi, 1967, s. 215 – 216.

<sup>159</sup> Հայերեն՝ Գորիս:

վեցին հանգստի դեպի Աղրամ<sup>160</sup>: Բոլոր անհրաժեշտ միջոցները կծեռնարկվեն նրանց Դիլիջանի<sup>161</sup> վրայով ուղարկելու նպատակով:

5. Աղրբեջանում ԱՄԺ Ներկայացուցիչ Մեմդուհ Շևքեթ բեյի<sup>162</sup> Բաքու ժամանելուն պես մեր կողմից որոշվեցին նրա պարտականությունների հաջող կատարման համար անհրաժեշտ միջոցները, և նա ծանոթացվեց հայտնի հեղափոխական գործիչների հետ, մասնավորապես, Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի անդամ ընկեր Ստալինի հետ, որը վերջին օրերին գտնվում է այստեղ:

